

# ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԹՈՒՐԹ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ԱՄՆ ԿՈՂՄԻՅ ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՃԱՆԱՉՍԱՆ ԽՆԴԻՐԸ 1991-2007 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ 2011

0147.925/  
7-79

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԹՈՒՐԹ-ԱՍԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ԱՄՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՃԱՆԱԶՄԱՆ ԽՆԴԻՐԸ 1991-2007 ԹԹ.

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԿԵԱՆ  
ՄԱՏԵՆԱՇԱՐ


66



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES

66

ԵՐԵՎԱՆ  
ԳՂ ԳԱՄ պատմ. իմաստ.  
2011



ՀՏԳ 327:941 (479.25)  
ԳՄԳ 66.4 + 63.3 (2Հ)  
Պ 797

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պ. գ. թ., դոցենտ Արմեն Մարության

Պողոսյան Բենիամին

Պ 797 – Թուրքիայի հարաբերությունները և ԱՄՆ կողմից  
Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007 թթ./ Բ. Պողոսյան;  
խմբ.՝ Ա. Մարության.-Եր.: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2011.- 78 էջ:

Աշխատությունը նվիրված է թուրք-ամերիկյան հարաբերու-  
թյուններում ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի  
ունեցած դերի վերլուծությանը:

Նախատեսված է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչ-  
ման, թուրք-ամերիկյան հարաբերությունների խնդիրներով զբաղվող  
մասնագետների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԳ 327:941 (479.25)  
ԳՄԳ 66.4 + 63.3 (2Հ)

ISBN 978-99941-73-53-2

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2011 թ.

Թուրք-ամերիկյան հարաբերությունները եվ ԱՄՆ կողմից Հայոց  
ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007

## Նախաբան

ԱՄՆ – Թուրքիա հարաբերությունները կարևոր նշանակություն ունեն հարավկովկասյան տարածաշրջանում ընթացող աշխարհաբա-  
ղաքական գործընթացների և հնարավոր զարգացումների տեսանկյու-  
նից: Գրանք որոշակի դերակատարում ունեն մաս Հայաստան – ԱՄՆ  
և Հայաստան – Թուրքիա երկկողմ հարաբերությունների համատեքս-  
տում: ԱՄՆ – Թուրքիա հարաբերություններում իր ուրույն դերակա-  
տարությունն ունի ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման  
գործունը: Ընդ որում, այն ունի ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի  
ազդեցություն:

ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության հնարավոր ճանաչման  
խնդիրը որոշակի ազդեցություն ունի այդ երկրի ներքաղաքական գոր-  
ծընթացներում: ԱՄՆ-ում գործող հիմնական հայկական լոբբիստա-  
կան կազմակերպությունները միշտ էլ բարձրացրել են Հայոց ցեղաս-  
պանության ճանաչման խնդիրը ինչպես Ներկայացուցիչների պալա-  
տի և Սենատի կողմից ընդունվելիք բանաձևերի, այնպես էլ նախա-  
գահների կողմից արվող հայտարարությունների ժամանակ: ԱՄՆ  
հայկական կազմակերպություններն այդ նպատակին հասնելու հա-  
մար օգտագործում են ԱՄՆ քաղաքական համակարգի առաջարկած  
տարբեր հնարավորությունները և սեփական գործունեությամբ այլ  
խնդիրը ներառել են ԱՄՆ ներքաղաքական հարաբերությունների  
ուլորտ: Բնականաբար, հայկական կազմակերպությունների գործադ-  
րած ջանքերը միշտ արժանացել են ԱՄՆ թուրքական լոբբիստական  
կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնական Անկարայի հա-  
կազդեցությանը, ընդ որում, թուրքական իշխանություններն այս  
խնդիրն ուղղակիորեն կապել են ԱՄՆ-Թուրքիա պաշտոնական հա-  
րաբերությունների հետ: Այս գործընթացի հետևանքով ԱՄՆ հայ հա-  
մայնքի՝ ցեղասպանության ճանաչման ուղղությամբ իրականացվող  
ջանքերը ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում էականորեն ավել-

լացրել են Հայոց ցեղասպանության ճանաչման գործոնի ազդեցությունը՝ այս խնդիրն ԱՄՆ ներքաղաքական հարթությունից անուղղակիորեն տեղափոխելով միջպետական հարաբերությունների ոլորտ:

ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության հնարավոր ճանաչման խնդիրը նաև ուղղակիորեն է առնչվում ԱՄՆ-Թուրքիա երկկողմ միջպետական հարաբերություններին, ընդ որում, անկախ ԱՄՆ հայ համայնքի և հայկական կազմակերպությունների իրականացրած գործունեությունից: Այդ գործոնն օգտագործվում է ամերիկյան իշխանությունների կողմից այս կամ այն հարցում Թուրքիայի նկատմամբ ճնշումներ գործադրելու նպատակով: Թուրքական իշխանությունների կողմից որևէ «անհնազանդության» դրսևորման դեպքում ամերիկյան հնարավոր հակաքայլերի թվին է դասվում նաև ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հնարավորությունը: Հարկ է նշել, որ երբեմն ԱՄՆ հայկական համայնքի ցեղասպանության ճանաչմանն ուղղված ջանքերը համընկնում են ամերիկյան պաշտոնական շրջանակների՝ Հայոց ցեղասպանության խնդրով Թուրքիային «վախեցնելու» քաղաքականությանը, սակայն շատ հաճախ, կարգավորելով սեփական խնդիրները երկկողմ առավել կարևոր նշանակություն ունեցող հարցերում, պաշտոնական Վաշինգտոնը ետ է քաշվում ցեղասպանության ճանաչմանն ուղղված վճռական քայլերի իրականացումից, ավելին, հատկապես գործադիր իշխանությունը հնարավոր բոլոր միջոցներով ջանում է կանխել ԱՄՆ Կոնգրեսի կողմից ցեղասպանության ճանաչման բանաձևերի ընդունումը:

ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործոնը որոշակիորեն առնչվում է նաև ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականությանը և Հայաստան-Թուրքիա հարաբերություններին: Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասում ԱՄՆ նպատակներից մեկը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն է, որը կարևոր նախապայման է դիտվում տարածաշրջանում ռուսական ազդեցության նվազման և ԱՄՆ ռազմավարական շահերի առաջ մղման համատեքստում: Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացն իր հերթին

առնչվում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրին: Այն առավել կարևորվեց 1998 թ. հետո, երբ Հայաստանի Հանրապետությունը ցեղասպանության միջազգային ճանաչման հիմնախնդիրը ներառեց սեփական արտաքին քաղաքական օրակարգում: Ստեղծված պայմաններում ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության հնարավոր ճանաչումը կարող է զգալի ազդեցություն ունենալ ոչ միայն թուրք-ամերիկյան, այլև հայ-ամերիկյան հարաբերությունների, ինչպես նաև ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության վրա:

Միաժամանակ հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանության գործոնը թեև կարևոր, սակայն ոչ վճռորոշ գործոն է թուրք-ամերիկյան հարաբերություններում: Վերջինիս ազդեցության ճիշտ գնահատման համար չափազանց կարևոր է ԱՄՆ – Թուրքիա հարաբերությունների ամբողջ համակարգի հստակ պատկերացումը՝ այդ հարաբերությունների վրա ազդող վճռորոշ գործոնների ներկայացումը:

Սույն ուսումնասիրության մեջ կփորձենք ներկայացնել ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների հոլովույթը և դրանցում Հայոց ցեղասպանության գործոնի դերակատարությունը 1991-2007 թթ. ընթացքում: Ժանակագրական այս հատվածի ընտրությունը բոլորովին պատահական չէ: Ուսումնասիրության սկիզբ է ընտրված 1991 թ., երբ Խորհրդային Միության փլուզումից հետո թուրք-ամերիկյան հարաբերությունները թևակոխեցին նոր փուլ: Այլևս չկար խորհրդային սպառնալիքը, որի դեմ պայքարում ԱՄՆ-ը Թուրքիային զգալի դերակատարություն էր հատկացնում, և հիմնականում ԽՍՀՄ զսպման քաղաքականության վրա էին հիմնված երկու պետությունների ռազմավարական հարաբերությունները: Միաժամանակ ԽՍՀՄ փլուզումը հատկապես 1990-ական թվականների սկզբին հետխորհրդային հանրապետություններում առաջ բերեց քաղաքական վակուում, որը լրացնելու համար լուրջ պայքար էր ընթանում տարածաշրջանային և տարածաշրջանից դուրս գտնվող ուժային կենտրոնների միջև: ԱՄՆ-ը հետխորհրդային տարածքում սեփական ծրագրերի իրականացման ընթացքում դերակատարություն էր նախատեսել Թուրքիայի համար, ինչն էլ զգալիորեն

պայմանավորում էր թուրք-ամերիկյան հարաբերություններն ու դրանցում առկա տարբեր՝ այդ թվում Հայոց ցեղասպանության գործոնի ազդեցությունը:

1991-2007 թթ. թուրք-ամերիկյան հարաբերությունները կարելի է բաժանել երկու հիմնական փուլերի՝ 1991-2002 թթ., և 2003-2007 թթ.: Այս բաժանման համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ չնայած եղած տարածայնություններին, 1991-2002 թթ., այնուամենայնիվ, թուրք-ամերիկյան հարաբերությունները պահպանում էին ռազմավարական գործընկերության բնույթը: Իրավիճակն սկսեց փոխվել 2002 թ. նոյեմբերին կայացած խորհրդարանական ընտրություններից հետո, երբ Թուրքիայում իշխանության եկավ չափավոր իսլամական «Արդարություն և զարգացում» կուսակցությունը: 2003-2007 թթ. բնորոշվում է երկկողմ հարաբերություններում լարվածության աստիճանական ավելացմամբ:

Միաժամանակ 1991-2002 թթ. շրջանը բաժանել ենք երկու հիմնական ենթափուլերի՝ 1991-1997 և 1998-2002 թթ.: Առաջին ենթափուլը բնորոշվում է Թուրքիայի գործադրած զգալի ջանքերով Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում սեփական ազդեցության տարածման և նշված տարածաշրջաններում գերիշխող դերի ստանձնման համար, ինչը վայելում էր նաև ԱՄՆ աջակցությունը: Սակայն, սկսած 1990 ական թվականների կեսերից պարզ դարձավ, որ Թուրքիան չունի անհրաժեշտ ռեսուրսներ առկա նպատակների իրականացման համար, և հաջորդ ենթափուլի ընթացքում (1998-2002 թթ.) իր առջև ավելի չափավոր նպատակներ էր դրել: Կատարված ժամանակագրական բաժանումը հիմնավորվում է նաև ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրում Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշմամբ: Եթե 1991-1997 թթ, ցեղասպանության պաշտոնական ճանաչումը ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգի մաս չէր կազմում, ապա 1998-2007 թթ., ՀՀ-ն պաշտոնապես աջակցում էր ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին:

Թուրք - ամերիկյան հարաբերություններում ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործոնի և դրա՝ Հայաստան - ԱՄՆ,

Հայաստան – Թուրքիա երկկողմ շփումների, ինչպես նաև տարածաշրջանային գործընթացների վրա ունեցած ազդեցության ուսումնասիրումը կարևոր նշանակություն ունի նաև 2008 թ. աշնանը մեկնարկած հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված գործընթացում արձանագրված զարգացումները ճիշտ վերլուծելու տեսակետից: Ինչպես և 1991-2007 թթ., 2008 թ. հետո էլ մենք ակնհայտ ենք հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված ԱՄՆ ակտիվ ջանքերին, ընդ որում այս անգամ ևս գործընթացում ամերիկյան կողմը որոշակի դերակատարություն է վերապահել Հայոց ցեղասպանության ճանաչման գործոնին, ինչի վկայությունն է 2010 թ. մարտի 4-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող թիվ 252 բանաձևի ընդունումը: Միաժամանակ այդ դեպքում ևս ցեղասպանության ճանաչման խնդիրն օգտագործվում է Թուրքիայի վրա քաղաքական ճնշումներ գործադրելու նպատակով, ընդ որում ոչ միայն Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման, այլև թուրք-ամերիկյան քաղաքական օրակարգի շատ ավելի կարևոր այլ խնդիրների համատեքստում, այդ թվում Իրանի նկատմամբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում նոր պատժամիջոցներ նախատեսող բանաձևի ընդունումը: ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը օգտագործում է նաև հրեական լոբբին՝ այն որպես «քաղաքական մահակ» օգտագործելով հակաիսրայելական ավելի ու ավելի կոշտ դիրքորոշում ցուցաբերող Թուրքիայի ներկայիս ղեկավարության նկատմամբ:

## Գլուխ Առաջին

### Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2002 թթ.

#### 1.1 Թուրք-ամերիկյան հարաբերությունները 1991-2002 թթ.

1991 թ. ԽՍՀՄ փլուզումը լուրջ փոփոխություններ առաջ բերեց տարածաշրջանում Թուրքիայի դերակատարման համար՝ վերջինիս համար ստեղծելով ինչպես հնարավորություններ, այնպես էլ նոր սպառնալիքներ: Թուրքիան ակտիվորեն ներգրավվեց Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում, ինչպես նաև սևծովյան տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական նոր գործընթացներում: Օգտվելով Ռուսաստանի դիրքերի էական թուլացումից և ստանալով Արևմուտքի աջակցությունը՝ Թուրքիայի ղեկավարները սկսեցին հավակնոտ հայտարարություններ անել այն մասին, որ Թուրքիայի գլխավորությամբ ստեղծվելու է նոր թյուրքական աշխարհի 120 միլիոն թյուրքալեզու բնակչությամբ, որն ընդգրկելու է Ադրբեջանն ու Կենտրոնական Ասիայի նախկին խորհրդային հանրապետությունները: Թուրքիայի նախագահ Թուրգուտ Օզալն անգամ պնդում էր, որ 21-րդ դարը լինելու է թյուրքական դար:<sup>1</sup>

Թուրքիայի իշխանությունները կոնկրետ քայլեր սկսեցին իրականացնել այդ ծրագրերի իրականացման ուղղությամբ: 1991 թ. նախագահ Օզալն այցելեց Խորհրդային Միություն, ընդ որում, բացի Մոսկվայից նա այցելեց նաև Ղազախստան և Ադրբեջան: Կենտրոնական Ասիայի նորանկախ պետությունների ղեկավարները ևս հանդես էին գալիս թուրքամետ ելույթներով: Ղրղզստանի նախագահ Ակար Ակաևը հայտարարեց, որ Թուրքիան այն աստղն է, որն առաջնորդում է թուրքական հանրապետությունների առաջընթացի ուղին, իսկ Ռուս-

<sup>1</sup> Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., Երևան, 2009, էջ 20:

բեկստանի նախագահ Իսլամ Բարիմովը նշում էր, որ Թուրքիան Ռուս-բեկստանի համար «մեծ եղբոր» նշանակություն ունի:<sup>2</sup>

Թուրքական այս նկրտումները վայելում էին ԱՄՆ իշխանությունների աջակցությունը: Թե՛ Ջորջ Բուշ Ավագի և թե՛ Բիլ Բլինթոնի վարչակարգերը ակտիվորեն նպաստում էին նշված տարածաշրջաններում Թուրքիայի դերակատարման բարձրացմանը: Թուրքիան, ԱՄՆ աջակցությամբ, իրեն ներկայացնում էր որպես տնտեսապես զարգացած, տեխնիկական լուրջ առաջընթաց արձանագրած աշխարհիկ պետության մոդել, որը սահմանափակում է իսլամի նշանակությունը քաղաքական գործընթացներում և ունի կայուն ժողովրդավարական քաղաքական համակարգ: Թուրքիայի համար նախկին խորհրդային հանրապետություններում կարևոր դերակատարման ստանձնումը որոշակիորեն փոխհատուցում էր ԽՍՀՄ փլուզման հետևանքով ԱՄՆ-ի համար Թուրքիայի ռազմավարական կարևորության նվազման հանգամանքը: Այդ նվազման վկայություն կարելի է համարել այն փաստը, որ արդեն 1994 թ. կեսերին Թուրքիայում գտնվող 12 ամերիկյան ռազմակայաններից ութը կամ փակվել, կամ հանձնվել էին թուրքական զինված ուժերին: Ջգալիորեն նվազեցին նաև ԱՄՆ-ի կողմից Թուրքիային տրամադրվող ռազմական օգնության չափերը: 1992թ. ավարտին մոտեցավ Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև 1980 թ. մարտի 29-ին ստորագրված և դեկտեմբերի 18-ին ուժի մեջ մտած «Պաշտպանական և տնտեսական համագործակցության մասին» պայմանագրի գործողության ժամկետը: Մկսած 1992 թ. նշված պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում էր միայն մեկ տարով, և յուրաքանչյուր տարի այդ հարցը հավելյալ խնդիրներ էր ստեղծում կողմերի համար:<sup>3</sup>

Այնուամենայնիվ, ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՄՆ – Թուրքիա հարաբերություններում նկատելի էր երկկողմ դաշնակցային հարաբե-

<sup>2</sup> Cornell S., The Nagorno-Karabakh Conflict, report No 46, Department of East European Studies, Uppsala University, 1999, p. 64-65.

<sup>3</sup> William M Hale, Turkish Foreign Policy 1774-2000, Routledge, 2002 p. 218-219.

բուրժուականների պահպանման համար նոր հիմքերի որոնումը: Ստեղծված պայմաններում Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում ԱՄՆ կողմից Թուրքիային հատկացվող դերակատարությունը աստիճանաբար դառնում էր այն խնդիրներից մեկը, որի վրա հիմնվում էին երկկողմ նոր հարաբերությունները: Ընդ որում, տարածաշրջանում Թուրքիային տրվում էր ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական նշանակություն: Արդեն 1990-ական թվականների սկզբին ակտիվորեն քննարկվում էին Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի էներգետիկ ռեսուրսները Ադրբեջանի և Թուրքիայի տարածքով Արևմուտք տեղափոխելու ծրագրերը, որոնք ակտիվ աջակցություն էին ստանում նաև ԱՄՆ կողմից: Հաշվի առնելով 1990-ական թվականների սկզբին Վրաստանում ստեղծված անկայուն իրավիճակը, այն չէր դիտարկվում որպես էներգետիկ ռեսուրսների տարանցման հնարավոր տարբերակ: Էներգետիկ ռեսուրսներն Ադրբեջանից Թուրքիա տարանցելու համար անհրաժեշտ էր կամ օգտագործել Հայաստանի տարածքը, կամ էլ ռուդակի ցամաքային կապ ստեղծել Ադրբեջանի և Նախիջևանի միջև, որի տարածքով էլ կառուցվելիք խողովակաշարերը մուտք կգործեին Թուրքիա: Սակայն այս խնդրում անհնար էր որևէ առաջխաղացման հասնել արցախյան շարունակվող հակամարտության պայմաններում: Թուրքական իշխանությունները փորձում էին արցախյան հակամարտության կարգավորման իրենց համար ընդունելի լուծումներ ներկայացնել՝ այդ գործընթացում ներգրավելով նաև ԱՄՆ իշխանություններին: Նմանատիպ առաջարկներից մեկը Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հիքմեթ Չեթինի՝ 1992 թ. առաջ քաշած դարաբաղյան հակամարտության կարգավորման ծրագիրն էր, որի համաձայն Աեռնային Գարաբաղը Հայաստանին կապող միջանցքի հետ միասին ճանաչվում էր Հայաստանի Հանրապետության մաս, իսկ դրա փոխարեն Հայաստանն Ադրբեջանին էր հանձնում Սյունիքի մի հատվածը, ինչի արդյունքում Ադրբեջանը ցամաքային կապ կունենար Նախիջևանի հետ:<sup>4</sup>

Ներկայացնելով 1991-1997 թթ. թուրք-ամերիկյան հարաբերությունները, հարկ է նշել, որ արդեն 1990 ական թվականների կեսերին ակնհայտ դարձավ, որ Թուրքիան ի վիճակի չէ կատարել Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում ԱՄՆ-ի կողմից նրա առջև դրված նպատակները: Թուրքիան չկարողացավ առաջատար դերակատարություն ստանձնել նշված տարածաշրջաններում և դրա հիմնական պատճառներից մեկը Թուրքիայի տնտեսական ծանր դրությունն էր, ինչպես նաև ուժային այլ կենտրոնների՝ նշված տարածաշրջաններում հաստատվելու կամ ազդեցությունը չկորցնելու ուղղությամբ իրականացված քայլերը: Այս առումով ակտիվ դերակատարություն էր ստանձնել Ռուսաստանը, որը փորձում էր գտնել մասամբ պահպանել իր դիրքերը նախկին ԽՍՀՄ հանրապետություններում: Հարավային Կովկաս թուրքական ներթափանցմանը բացասական էր տրամադրված նաև Իրանի Իսլամական Հանրապետությունը:

Միաժամանակ թուրք-ամերիկյան հարաբերություններում որոշակի լարվածություն նկատվեց 1996-1997 թթ, երբ Թուրքիայում վարչապետի պաշտոնը զբաղեցնում էր իսլամական «Բարեկեցություն» կուսակցության ղեկավար Էրբականը: Վերջինս փորձեց բարելավել հարաբերությունները Թուրքիայի անմիջական հարևանների, առաջին հերթին Իրանի և Սիրիայի հետ, ինչը բնականաբար չէր կարող դժգոհություն չառաջացնել ԱՄՆ-ի մոտ: Ի վերջո, զինվորականության ճնշման ներքո Էրբաքանը 1997 թ. հարկադրված էր հրաժարական ներկայացնել:

Էրբաքանի հրաժարականից հետո մինչև Թուրքիայում 2002 թ. նոյեմբերի խորհրդարանական ընտրություններն ընկած ժամանակաշրջանում ևս թուրք-ամերիկյան հարաբերությունների հիմքում շարունակում էր մնալ ռազմական և անվտանգային բաղադրիչը: Թուրքիան ԱՄՆ-ին դիտարկում էր որպես սեփական անվտանգության ապահովման կարևոր գրավական՝ թե՛ ՆԱՏՕ-ի շրջանակներում կողմերի

<sup>4</sup> Blank Stephen, Pelletiere Stephen, Johnsen William, Turkey's Strategic Position at the

ստանձնած պարտավորությունների, թե՛ երկկողմ հարաբերությունների համատեքստում:

1998-2002 թթ. թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա ազդող գործոններից անհրաժեշտ է հիշատակել նաև կասպյան էներգակիրների՝ Ռուսաստանը շրջանցող ճանապարհով դեպի Թուրքիա, իսկ այնուհետև Եվրոպա արտահանելու ծրագրերը: Այս խնդրում թուրք-ամերիկյան շահերն ամբողջությամբ համընկնում էին: Թե՛ Բիլ Բլինթոնի և թե՛ Ջորջ Բուշ կրտսերի վարչակազմերն ակտիվորեն աջակցում էին նոր գազա և նավթամուղերի կառուցման ծրագրերին: Այս խնդրում ակտիվ շահագրգռվածություն էր ցուցաբերում նաև Թուրքիան, որն այդ ծրագրերի իրականացումը դիտում էր թե՛ որպես տարածաշրջանում սեփական դիրքերի ամրապնդման միջոց և թե՛ ավելի գորթված մասշտաբով սեփական վարկանիշի բարձրացման հնարավորություն: Հարկ է նշել, որ առաջին հերթին հենց ԱՄՆ աջակցությամբ կոմերցիոն տեսակետից նպատակահարմար շիամարվող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի շինարարությունը մեկնարկեց 2002 թ. սեպտեմբերին: ԱՄՆ-ը և Թուրքիան սերտորեն համագործակցում էին նաև Ադրբեյջանի և Վրաստանի հետ՝ նշված պետությունների հետ հարաբերությունները սերտացնելու և վերջիններիս դեպի Արևմուտք ուղղորդելու նպատակով: Հենց այս տարիներին դրվեց Թուրքիա-Վրաստան-Ադրբեյջան առանցքի հիմքերը, որը դարձավ տարածաշրջանում արևմտյան քաղաքականության առաջ մղման գործիքներից մեկը:

1998-2002 թթ. թուրք-ամերիկյան հարաբերություններում որոշակի դերակատարում էր ստանձնել նաև Բալկաններում, և, մասնավորապես, Կոսովոյում ստեղծված իրավիճակը: Այս առումով հարկ է նշել, որ «Սառը պատերազմի» ավարտից հետո Թուրքիան ակտիվորեն ներգրավված էր Բալկաններում ընթացող գործընթացներին՝ միաժամանակ խուսափելով միակողմանի գործողությունների իրականացումից և նախընտրելով գործել ՆԱՏՕ-ի շրջանակներում:

Երկկողմ հարաբերությունների համատեքստում կարևոր խնդիրներից էր նաև 2000-2002 թթ. Թուրքիայում ֆինանսական ծանր ճգնաժամի հանդեպ ԱՄՆ դիրքորոշման հարցը: 2001 թ. հունվարին իշխա-

նության եկած Ջորջ Բուշ Կրտսերի վարչակարգը լուրջ վերապահումներ ուներ տարբեր պետություններում ֆինանսական ճգնաժամը կանխելուն ուղղված միջազգային ծրագրերի նկատմամբ: Այնուամենայնիվ, 2001 թ. ԱՄՆ-ը հավանություն տվեց Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից Թուրքիային շուրջ 17 միլիարդ դոլար վարկ տրամադրելու որոշմանը՝ միաժամանակ Թուրքիայից պահանջելով իրականացնել լուրջ տնտեսական բարեփոխումներ:<sup>5</sup>

Նշված ժամանակաշրջանում երկկողմ հարաբերություններում աստիճանաբար կարևոր տեղ էին զբաղեցնում նաև տնտեսական կապերը, չնայած այստեղ առկա էին նաև լուրջ խոչընդոտներ: Նշենք, որ 1991-1999 թթ. ԱՄՆ-ից Թուրքիա կատարվող ներմուծման տարեկան ծավալները 2.5 միլիարդից հասել էին 3.2 միլիարդ դոլարի, իսկ Թուրքիայից ԱՄՆ արտահանումը՝ տարեկան 1 միլիարդից 2.6 միլիարդ դոլարի:<sup>6</sup>

*1.2 Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը ԱՄՆ-ում և ամերիկյան լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը 1991-2002 թթ.*

Սառը պատերազմին անմիջապես հաջորդող ժամանակաշրջանում ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացն ակտիվ բնույթ չէր կրում: Ակնհայտ էր, որ ԽՍՀՄ փլուզումից հետո տարածաշրջանում ձևավորված աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը որոշակիորեն մղվելու էր երկրորդ պլան, քանի որ

<sup>5</sup> F. Stephen Larrabee, Ian O. Lesser, Turkish Foreign Policy in an Age of Uncertainty, RAND Corporation 2003, p. 177.  
<sup>6</sup> Abdullah Akyuz, “U.S.-Turkish Economic Relations at the Outset of the 21st Century,” Insight Turkey, Vol. 2, No. 4, October–December, 2000, p. 74.

պաշտոնական Վաշինգտոնին այդ պահին ձեռնառու չէր Թուրքիայի հետ հարաբերությունների վատթարացումը:

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացն ԱՄՆ-ում ներառում է ինչպես ցեղասպանությունը ճանաչող բանաձևերի քննարկումները Կոնգրեսում, այնպես էլ ԱՄՆ նախագահների սպրիլի 24-ին հրապարակվող ամենամյա ուղերձներում ցեղասպանություն բառի օգտագործման հարցը:

Խոսելով ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի մասին՝ պետք է նշել, որ նմանատիպ բանաձևերի քննարկումը սկսվել է դեռևս 1970 ական թվականներից: 1975 թ. հունվարի 28-ին հանրապետական կոնգրեսական Հենրի Հելստոսկին Ներկայացուցիչների պալատ ներկայացրեց թիվ 148 բանաձևը, որը լիազորում էր ԱՄՆ նախագահին 1975 թ. ապրիլի 24-ը հայտարարել «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակի ազգային օր» և հիշել ցեղասպանության բոլոր զոհերին, հատկապես հայերի այն նախնիներին, ովքեր դարձել են 1915 թ. իրականացված ցեղասպանության զոհ: Բանաձևը Ներկայացուցիչների պալատի կողմից ընդունվեց 1975 թ. ապրիլի 8-ին և ուղարկվեց Սենատ, որտեղ այն հավանության չարժանացավ:<sup>7</sup>

1983 ապրիլի 21-ին կոնգրեսական Էնթոնի Կոելիոն ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատ ներկայացրեց 1984 թ. ապրիլի 24-ը «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակի ազգային օր հռչակելու» թիվ 247 բանաձևը<sup>8</sup> (այն Միացյալ Նահանգների նախագահին առաջարկում և լիազորություն էր տալիս 1984 թ. ապրիլի 24-ը նշել որպես ցեղասպանության բոլոր զոհերի հիշատակի օր, հատկապես հայերի մեկուկես միլիոն նախնիների, ովքեր դարձել են 1915-1923 թթ. Թուրքիայում իրականացված ցեղասպանության զոհը): Բանաձևը Ներկայացուցիչների պալատի կողմից ըն-

դունվեց 1984 թ. սեպտեմբերի 10-ին (այն ցեղասպանության զոհերի հիշատակի օր էր սահմանում արդեն 1985 թ. ապրիլի 24-ը) և ուղարկվեց Սենատ, սակայն այնտեղ այդպես էլ չքննարկվեց:

Միաժամանակ հարկ է նշել, որ արդեն այս շրջանում ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը որոշակի ազդեցություն ուներ ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում: Այդ մասին հետաքրքիր տեղեկություններ են բերվում ամերիկացի պաշտոնաթղղ ղիվանագետ Արմա Ջեյն Կարերի 2009 թ. դեկտեմբերին հրապարակված հարցազրույցում: Դիվանագետը 1984-86 թթ. ԱՄՆ պետքարտուղարությունում զբաղվել է Թուրքիայի հետ հարաբերությունների համակարգմամբ: Վերջինիս համաձայն, երբ 1983 թ. կոնգրեսական Կոելիոն Ներկայացուցիչների պալատ էր ներկայացրել հիշյալ բանաձևը, թուրքական իշխանություններն ակտիվ շփումների մեջ են եղել ամերիկյան վարչակազմի ներկայացուցիչների հետ՝ բանաձևի ընդունումը կանխելու համար: Մասնավորապես, ԱՄՆ պետքարտուղարին թուրքական իշխանությունները հայտնել են, որ բանաձևի ընդունումը զգալի վնաս կհասցնի երկկողմ հարաբերություններին: Ինչպես նշում է նախկին դիվանագետը, Պետքարտուղարն իր օգնականին, իսկ վերջինս էլ Կարերի անմիջական ղեկավարին հանձնարարել է քայլեր ձեռնարկել բանաձևի ընդունումը կանխելու համար: Կարերի բերած տեղեկությունների համաձայն, բանաձևի ընդունումը կանխելու ուղղությամբ իրականացված գործողություններում նա որոշակի օժանդակություն է ստացել մաև հրեական լոբբիստական կազմակերպություններից, ովքեր չէին ցանկանում «ցեղասպանության ենթարկվածի կարգավիճակը կիսել այլ ժողովուրդների հետ»:<sup>9</sup>

Մինչ ԽՍՀՄ փլուզումն ընկած ժամանակաշրջանում նախագահների կողմից արվող հայտարարություններից անհրաժեշտ է հիշատակել 1981 թ. ապրիլի 22-ին նախագահ Ռոնալդ Ռեյգանի՝ Հոլոքոսթի հիշատակի օր սահմանելու վերաբերյալ հայտարարությունը, որտեղ

<sup>9</sup> Former Diplomats Reveals Secret State Department Attacks on 1980s Armenian Genocide Resolutions, [http://www.anca.org/press\\_releases/press\\_releases.php?prid=1789](http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=1789).

<sup>7</sup> <http://thomas.loc.gov/cgi-bin/bdquery/D?d094:1:./temp/~bdvFCk:@@L&summ2=m&/bss/d094query>.

<sup>8</sup> <http://thomas.loc.gov/cgi-bin/bdquery/D?d098:1:./temp/~bdmihzm:@@L&summ2=m&/bss/d098query.html>

նախագահը օգտագործեց Հայոց ցեղասպանությունն բառակապակցությամբ:

Ներկայացնելով ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը, անհրաժեշտ է անդրադարձ կատարել նաև ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների գործունեությանը: Նշենք, որ ԱՄՆ հայ համայնքի քաղաքական գործունեությունը բավականին երկար պատմություն ունի, և նրա արմատները հասնում են մինչև 19-րդ դար: Հայ համայնքի առաջին քաղաքական ուղղվածություն կրող գործունեությունն արձանագրվել է դեռևս 1880 ական թվականներին, երբ Մասաչուսեթս նահանգի Վորչեսթեր քաղաքի հայ համայնքը օրինագծի նախագիծ է ներկայացրել, որի հիմնական նպատակը Օսմանյան կայսրությունից դեպի ԱՄՆ հայերի արտագաղթի կանխումն էր:<sup>10</sup> Առաջին համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ հայ համայնքը քայլեր ձեռնարկեց ԱՄՆ-ի և նորաստեղծ թուրքական հանրապետության միջև նորմալ հարաբերությունների հաստատումը կանխելու, ինչպես նաև ԱՄՆ Սենատի կողմից Լոզանի պայմանագրի վավերացումը թույլ չտալու ուղղությամբ:<sup>11</sup>

Եթե 19-րդ դարի վերջին ամերիկահայերը քայլեր էին ձեռնարկում ներգաղթի սահմանափակման ուղղությամբ, ապա արդեն 1920 ական թվականներին ակամատես ենք դառնում հակառակ իրավիճակի: 1927 թ. ԱՄՆ Կոնգրեսը հատուկ օրենք էր ընդունել, որը հստակ չափաբաժին էր նախատեսում յուրաքանչյուր ազգության ներգաղթյալների համար և տարեկան թույլատրվում էր ընդամենը 100 հայ ներգաղթյալի մուտքը ԱՄՆ: Սակայն հայ համայնքի ջանքերով հայերը ստացան ոչ թե ներգաղթյալների, այլ փախստականների կարգավիճակ, ինչը հնա-

<sup>10</sup> Robert Mirak, *Torn Between Two Lands: Armenians in America, 1890 to World War One*, (Cambridge, Harvard University Press, 1983), p 44.

<sup>11</sup> Trask R. Roger, *The United States Response to Turkish Nationalism and Reform, 1914-1939*, (Minneapolis, University of Minnesota Press, 1971), pp. 37-38.

րավորություն տվեց շատ ավելի մեծ թվով հայերի, (առաջին հերթին Հայոց ցեղասպանությունից վերապրածների) մուտք գործել ԱՄՆ:<sup>12</sup>

Ներկայումս ԱՄՆ-ում գործում են երկու հիմնական հայկական լոբբիստական կազմակերպություններ: Գրանցից առաջինը ՀՅԳ Ամերիկայի հայ ազգային կոմիտեն է (ԱՀԱԿ, Armenian National Committee of America), մյուսը՝ Ամերիկայի հայկական համագումարը (ԱՀՀ, Armenian Assembly of America):

ԱՀԱԿ-ի առջև դրված հիմնական խնդիրներն են անկախ միացյալ և ազատ Հայաստանի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացումը, ԱՄՆ քաղաքականության այն ոլորտների վրա ազդեցությունը, որոնք հետաքրքրություն են ներկայացնում ամերիկահայ համայնքի համար, կապող օղակի ստեղծումը հայ համայնքի և ԱՄՆ ընտրված պաշտոնյաների միջև: Կազմակերպության կարևորագույն խնդիրների թվում են աջակցությունը Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման և անկախության իրավունքին, ժողովրդավարական և բարեկեցիկ Հայաստանի ստեղծմանը նպաստելը, ԱՄՆ-ի կողմից Հայաստանին տրամադրվող օգնության ծավալների ավելացումը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը:<sup>13</sup> ԱՀԱԿ-ի վարչության նախագահն է Քեննեթ Հաչիկյանը, գործադիր տնօրենը Արամ Սուրեն Համփարյանը: ԱՀԱԿ-ն Միացյալ Նահանգների ողջ տարածքում գրասենյակների բավականին լայն ցանց ունի:

ԱՄՆ-ում գործող հայկական մյուս լոբբիստական կազմակերպությունը Ամերիկայի հայկական համագումարն է, որն ակտիվ գործունեություն և բազմաթիվ ծրագրեր է իրականացնում ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում: ԱՀՀ-ն հիմնադրվել է 1972թ. իբրև բարեսիրական և կրթական ֆոնդ, որի նպատակն էր օժանդակել ԱՄՆ-ում հայ ազգային մշակույթի տարածմանը և ամերիկահայերի կրթությանը: Հիմնադիրներն էին Ստիվեն Մուգարը

<sup>12</sup> Phillips Jenny, *Symbol, Myth and Rhetoric: The Politics of Culture in an Armenian American Population*, (New York, AMS Press, 1989), p. 104

<sup>13</sup> About the ANCA, <http://www.anca.org/ancaprofile.php>

1554



և Հրայր Հովնանյանը, որը մինչ օրս զբաղեցնում է հաստատության հոգաբարձուների խորհրդի նախագահի պաշտոնը: Մինչև 1984թ. ԱՀՀ-ի գործադիր մարմնի անդամների կեսը Հայ հեղափոխական դաշնակցության և Ռամկավար ազատական կուսակցության ներկայացուցիչներ էին: Մակայն 1984թ. կուսակցությունները հետ կանչեցին իրենց ներկայացուցիչներին:<sup>14</sup>

ԱՀՀ-ի ղեկավար մարմիններն են հոգեբարձուների և տնօրենների խորհուրդները: Գործունեության անմիջական ղեկավարումն իրականացնում է գործադիր տնօրենը: Այս պաշտոնը 2005թ. ապրիլից զբաղեցնում է Բրայան Արդունին:

Մինչև Հայաստանի անկախության հռչակումը ԱՀՀ-ն իր ուշադրության կենտրոնում էր պահում ամերիկահայ համայնքին առնչվող խնդիրները, ինչպես նաև ակտիվորեն ներգրավված էր ամերիկյան Կոնգրեսի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերի ընդունմանն ուղղված աշխատանքներում: 1986թ. Կոնգրեսի կողմից ՄԱԿ-ի 1948թ. ղեկտեմբերին ընդունված «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի» կոնվենցիան վավերացնելու արշավի շրջանակներում ԱՀՀ-ն կազմակերպեց ամերիկահայության 20000 նամակների հոսքը Սենատի հասցեով:<sup>15</sup> 1997թ. համագումարի շրջանակներում հիմնադրվեց «Հայկական ազգային ինստիտուտը», (Armenian National Institute. ANI), որը հետազոտություններ է իրականացնում Հայոց ցեղասպանության վերաբերյալ:

1990-ական թվականների առաջին կեսին ԱՄՆ հայկական լոբբիստական կազմակերպությունների ջանքերի զգալի մասն ուղղված էր Ադրբեջանի դեմ ԱՄՆ կողմից պատժամիջոցների ընդունմանը, Թուրքիային ամերիկյան զենքի վաճառքի խնդրում սահմանափակումների մտցմանը, ինչպես նաև ԱՄՆ իշխանությունների օժանդակությամբ՝ 1993 թ. ապրիլից փակված հայ-թուրքական սահմանի վերաբացմանը հասնելը: Առաջին հերթին ԱՄՆ հայկական կազմակերպությունների՝

ԱՀՀ-ի և ԱՀԱԿ-ի ջանքերի շնորհիվ «Ազատության աջակցության ակտի» շրջանակներում ընդունվեց 907-րդ ուղղումը, որն արգելում էր ԱՄՆ կողմից Ադրբեջանին պետական օժանդակության տրամադրումը, քանի դեռ վերջինս շարունակում էր Հայաստանի հանդեպ թշնամական գործողությունները և Հայաստանի շրջափակումը:<sup>16</sup> Միաժամանակ հայկական լոբբիստական կազմակերպությունները ջանքեր էին գործադրում Թուրքիային տրամադրվող ամերիկյան ռազմական օգնությունը սահմանափակելու համար: Նրանք, առաջին հերթին ԱՀԱԿ-ը, հունական լոբբիստական կազմակերպությունների հետ միասին քայլեր էր ձեռնարկում «Հումանիտար օգնության միջանցքի» մասին օրենքի նախագծի միջոցով (Ներկայացուցիչների տան բանաձև թիվ 942) այդ նպատակին հասնելու համար: Օրինագիծը նախատեսում էր դադարեցնել ԱՄՆ ցանկացած տիպի օգնություն որևէ երկրի, որը թույլ չէր տալիս սեփական տարածքով այլ պետությունների համար նախատեսված ամերիկյան հումանիտար օգնություն անցկացնել:<sup>17</sup>

Միաժամանակ ԱՄՆ հայ համայնքը շարունակում էր նաև աշխատանքը ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունմանն ուղղությամբ: 1995 թ. մարտի 23-ին կոնգրեսական Դեյվիդ Բոնիորի կողմից ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում շրջանառության մեջ դրվեց թիվ 47 բանաձևի նախագիծը: Նախագծում ասվում էր, որ հաշվի առնելով այն փաստը, որ Թուրքիայի Հանրապետության նախորդ՝ Օսմանյան Կայսրության կառավարության կողմից 1915-1923 թթ. կազմակերպված ցեղասպանությանը զոհ են գնացել հայ ժողովրդի մեկից մեկուկես միլիոն նախնիներ, Ներկայացուցիչների պալատը (Սենատի համաձայնությամբ) որոշում է.

<sup>14</sup> Ղալլաբյան Կ., Հայ ակտիվների պատմություն, Երևան, 1998, էջ 293:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 294-295

<sup>16</sup> Heather S. Gregg, Divided They Conquer: The Success of Armenian Ethnic Lobbies in the US, The Rosemary Rogers Working papers Series, 2001, pp. 33-34.

<sup>17</sup> Այս մասին ավելի մանրամասն տես՝ Congresswoman Nancy Pelosi, In Support of the Humanitarian Corridor Act June 5, 1996, <http://www.house.gov/pelosi/corridor.htm>.

1. Կոնգրեսը միանում է ամերիկահայ համայնքին՝ հարգելու հայկական ցեղասպանության զոհերի հիշատակը:

2. Միացյալ Նահանգները պետք է խրախուսի Թուրքիայի Հանրապետությանը ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ճանաչելու և հիշատակի արժանացնելու 1915-1923 թթ. Օսմանյան կայսրության հայ բնակչության նկատմամբ իրականացված դաժանությունները:<sup>18</sup>

Սակայն չնայած ամերիկահայ համայնքի ձեռնարկած ջանքերի, այս բանաձևը չներկայացվեց Ներկայացուցիչների պալատի քննարկմանը:

Նույն 1995 թ. ԱՄՆ հայ լոբբիստական կազմակերպությունների ջանքերով հիմնվեց ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Հայկական հարցերով հանձնախումբը: Հանձնախմբի առաջին համանախագահներն էին Գեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Նյու Ջերսիի կոնգրեսական Ֆրենք Փալոնը և Իլինոյսի նահանգից Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Էդվարդ Պրոտերը:<sup>19</sup>

1996 թ. մայիսի 15-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնախմբի նախաձեռնությամբ Կոնգրեսում անցկացվեցին լուսններ Հայոց ցեղասպանության պատմական փաստի ճանաչման խնդրի շուրջ:<sup>20</sup> 1997 թ. մարտի 21-ին Կոնգրեսական Ջորջ Ռադանովիչը շրջանառության մեջ դրեց Ներկայացուցիչների պալատի թիվ 55 բանաձևի տեքստը, որը հիմնականում կրկնում էր 1995 թ. ներկայացված թիվ 47 բանաձևի ձևակերպումները: Բանաձևն ուղղվեց ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնաժողով, սակայն այդպես էլ չընդգրկվեց Ներկայացուցիչների պալատի օրակարգում:<sup>21</sup>

<sup>18</sup> The Armenian Genocide. Documents and Declarations 1915-1995. Compiled with an introduction by Harut Sassounian, Los Angeles, 1995, p. 12.

<sup>19</sup> Heather S. Gregg, *ibid.*, p. 27.

<sup>20</sup> Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Երևան, 2001 թ., էջ 13:

<sup>21</sup> Բանաձևի ամբողջական տեքստը տես ՀՅԹ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 17, փաստաթուղթ 1:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ ուղերձներով հանդես եկավ նաև ԱՄՆ նախագահ Բիլ Բլինթոնը: Նշենք, որ 1994 թ. սկսած այդ ուղերձները կրում էին ամենամյա բնույթ: Սակայն այս բոլոր ուղերձներում ԱՄՆ նախագահը խուսափում էր ցեղասպանություն բառն օգտագործելուց՝ բավարարվելով «մեծ ողբերգություն», «պատմության մութ էջ» և նմանատիպ այլ ձևակերպումներով:<sup>22</sup>

1999 թ. նոյեմբերի 18-ին կոնգրեսականներ Ջորջ Ռադանովիչի և համահեղինակներ Դեյվիդ Բոնիտրի, Ֆրենկ Փալոնի և Ջեյմս Ռոզանի կողմից Ներկայացուցիչների պալատ ներկայացվեց թիվ 398 բանաձևը: Բանաձևում նշվում էր, որ 1915-1923 թթ. Օսմանյան կայսրության կողմից իրականացված քաղաքականության արդյունքում տեղահանվել է երկու միլիոն հայ, որոնցից մեկուկես միլիոնը սպանվել են: Բանաձևը կոչ էր անում ԱՄՆ նախագահին Հայոց ցեղասպանության վերաբերյալ համապատասխան ուսուցում և նյութեր ապահովել Միացյալ Նահանգների մարդու իրավունքների ոլորտի և ընդհանրապես արտաքին քաղաքականության հետ առնչվող ծառայությունների բոլոր պաշտոնյաների, առաջին հերթին պետքարտուղարության բոլոր աշխատակիցների համար: 2000 թ. սեպտեմբերի 14-ին բանաձևը հաստատվեց արտաքին հարաբերությունների հանձնաժողովի արտաքին գործերի և մարդու իրավունքների ենթահանձնաժողովի կողմից, իսկ սեպտեմբերի 21-ին՝ նաև հանձնաժողովի կողմից: Սակայն նախագահ Բլինթոնի ակտիվ միջամտության հետևանքով բանաձևը Ներկայացուցիչների պալատի օրակարգ չմտավ:<sup>23</sup>

<sup>22</sup> Ուղերձների տեքստն ամբողջությամբ տես ՀՀ ՉԱԱ Հայոց ցեղասպանության Թանգարան Ինստիտուտ, գիտական ֆոնդեր, բաժին 41, թղթապանակ 15, փաստաթուղթ 1 և և բաժին 25, թղթապանակ 18, փաստաթուղթ 4:

<sup>23</sup> Միրզոյան Ա., Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման և դատապարտման գործընթացը Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1915-2004 թթ., ատենախոսություն է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան 2005, էջ 129-132

2000 թ. սեպտեմբերի 27-ին կոնգրեսական Ջորջ Ռադանովիչի կողմից շրջանառության մեջ դրվեց Ներկայացուցիչների պալատի թիվ 596 բանաձևի նախագիծը, որը գրեթե կրկնում էր թիվ 398 բանաձևը: Բանաձևից, սակայն, հանվել էր Հայոց ցեղասպանության մասին ուսուցում ապահովելու կետը: Բանաձևը կրճատ անվանվում էր «Բանաձև ցեղասպանության մասին Միացյալ Նահանգների փաստաթղթերի հաստատման մասին»: Բանաձևի նախագծում հստակ փաստեր էին ներկայացվում Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Այն կոչ էր անում ԱՄՆ նախագահին Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված ամենամյա ուղերձներում 1.5 միլիոն հայերի սխտեմատիկ կանխամտածված ոչնչացումը բնութագրել որպես ցեղասպանություն:<sup>24</sup>

Բանաձևը քննարկման դրվեց Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում: Դրա ընդունման հավանականությունն ավելի էր մեծանում ԱՄՆ-ում ընթացող նախագահական ընտրարշավի պատճառով: Ջորջ Բուշ կրտսերի և գոծող փոխնախագահ Ալբերտ Գոդի միջև ձայների տարբերությունն աննշան էր, և այս հանգամանքը թե՛ Դեմոկրատական և թե՛ Հանրապետական կուսակցությանը հարկադրում էր դիմել ցանկացած միջոցի՝ ընտրողների հավելյալ ձայներ շահելու համար: Ստեղծված պայմաններում մի քանի հարյուր հազարի հասնող հայ ընտրողների ձայները կարող էին վճռորոշ նշանակություն ունենալ 2000 թ. նոյեմբերին նախատեսված նախագահական ընտրությունների արդյունքների վրա:

Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ 2000 թ. փետրվարին ամերիկահայերին ուղղված նամակում դեռևս նահանգապետի պաշտոն զբաղեցնող Բուշ Կրտսերը հստակ հայտատարել էր, որ նախագահ ընտրվելու դեպքում կճանաչի Հայոց ցեղասպանության փաստը՝

<sup>24</sup> Բանաձևի ամբողջական տեքստը տես "Геноцид Армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества" Документы и комментарии. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов, том 2, часть 1, 2003, Москва, "Гардапуки", док. 1459.

այս խնդիրն անուղղակիորեն ներգրավելով ԱՄՆ նախընտրական քարոզարշավում: Նշենք, որ ընտրվելուց հետո Բուշ Կրտսերը հրաժարվեց կատարել ամերիկահայերին տված խոստումը: 2001 թ. ապրիլի 24-ի իր ուղերձում նա խուսափեց Հայոց ցեղասպանություն բառակապակցությունն օգտագործելուց, դրա փոխարեն նախընտրելով «պատմության մեծագույն ողբերգություններից մեկը» արտահայտությունը, չնայած այն հանգամանքին, որ ավելի քան 100 կոնգրեսական նամակով դիմել էր Ջորջ Բուշին՝ կոչ անելով վերջինիս կատարել իր նախընտրական խոստումները և ճանաչել Հայոց ցեղասպանությունը:<sup>25</sup>

Թուրքիայում ևս գիտակցում էին, որ այս անգամ Ներկայացուցիչների պալատի կողմից բանաձևի ընդունման հավանականությունը բավականին մեծ է: 2000 թ. հոկտեմբերի 3-ին Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում նախատեսված քննարկումներին մասնակցելու նպատակով Թուրքիայի Ազգային մեծ ժողովը հատուկ պատվիրակություն ուղարկեց Վաշինգտոն: Ի վերջո, չնայած թուրքական կողմի բոլոր ջանքերին, 2000 թ. հոկտեմբերի 3-ին Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 24 կողմ, 11 դեմ, 2 ձեռնպահ քվեարկության արդյունքով ընդունեց բանաձևը:

Նշենք, որ Հայաստանի իշխանությունները պաշտոնապես հայտարարեցին Ներկայացուցիչների պալատում նշված բանաձևի ընդունման աջակցության մասին: Ռուսական «Նեգավիսիմաձա գազետա» պարբերականին տված հարցազրույցում ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակ Արա Պապյանը նշել էր, որ Հայաստանն ամբողջովին աջակցում է Կոնգրեսում Հայոց ցեղասպանության խնդրով բանաձևի ընդունմանը՝ ավելացնելով, որ երկարաժամկետ առումով այդ քայլը կնպաստի թե՛ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանը և թե՛ տարածաշրջանում կայունության և կառուցողական երկխոսության հաստատմանը:

<sup>25</sup> PRESIDENT BUSH BREAKS PLEDGE TO RECOGNIZE ARMENIAN GENOCIDE, [http://www.anca.org/press\\_releases/press\\_releases.php?prid=73](http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=73)

Միաժամանակ ԱՄՆ գործադիր իշխանությունը քայլեր էր ձեռնարկել բանաձևի ընդունումը կանխելու ուղղությամբ: ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթն այս կապակցությամբ հրապարակված հայտարարության մեջ նշում էր, որ բանաձևի ընդունումը լուրջ հարված կհասցնի տարածաշրջանում ԱՄՆ կենսական շահերին: Նամատիկ հայտարարությամբ հանդես եկավ նաև Կենտրոնական հետախուզության վարչության տնօրեն Ջորջ Թենետը: Ներկայացուցիչների պալատին հատուկ նամակ ուղղեցին նաև ամերիկյան նախկին բարձրաստիճան ութ պաշտոնյաներ, որոնց թվում էին պաշտպանության նախարարներ Ֆրենկ Քարուչին և Ուիլիամ Փերին, պաշտպանության փոխնախարար Ռիչարդ Փերլը: Նամակի հեղինակները շեշտում էին, որ Թուրքիան ԱՄՆ անփոխարինելի դաշնակիցն է Մերձավոր Արևելքում, Կենտրոնական Ասիայում և Բալկաններում:

Հոկտեմբերի 3-ին կայացած քվեարկությունից հետո Թուրքիայի խորհրդարանի հինգ խմբակցություններ հատուկ հայտարարություն հրապարակեցին, որտեղ նշվում էր թուրքական կողմից պատասխան քայլեր ձեռնարկելու հնարավորության մասին, մասնավորապես, թուրք խորհրդարանականներն սպառնում էին արգելափակել ամերիկացիների կողմից Ինջիրլիկ ռազմակայանի օգտագործումը: Թուրքական կառավարությունն արդեն որոշակի քայլեր իրականացրել էր թե՛ ԱՄՆ-ի և թե՛ Հայաստանի նկատմամբ: Խստացվել էր Հայաստանի քաղաքացիներին Թուրքիա մուտքի արտոնագրերի տրամադրման կարգը: Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Հուսեյն Կիլիկիօղլուն չեղյալ էր հայտարարել ԱՄՆ նախատեսված այցելությունը, Թուրքիան վերականգնել էր Իրաքում թուրքական արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնը, իսկ Թուրքիայի Էներգետիկայի նախարար Ջումկուր Էրսյումերը նույնիսկ հայտարարել էր, որ Ներկայացուցիչների պալատի կողմից Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունման դեպքում

պաշտոնական Անկարան կվերսկսի իրաքյան նավթի տեղափոխումը Թուրքիայի տարածքով:<sup>26</sup>

Արտաքին հարաբերությունների կոմիտեի կողմից բանաձևի ընդունումից հետո նույն օրը ԱՄՆ նախագահ Բիլ Բլինթոնի հետ հեռախոսազրույց ունեցավ Թուրքիայի նախագահ Ահմետ Սեզերը՝ Թուրքիայի դժգոհությունն արտահայտելով բանաձևի ընդունման կապակցությամբ:<sup>27</sup>

Թուրքական կողմը ցեղասպանության բանաձևի ընդունումը կանխելու համար օգտագործում էր նաև ԱՄՆ-ից գեներլ ձեռք բերման գործարքները չեղյալ հայտարարելու խաղաքարը: Խնդիրը, մասնավորապես, վերաբերվում էր մի քանի միլիարդ դոլար ընդհանուր արժուրությամբ 145 ամերիկյան մարտական ուղղաթիռներ ձեռք բերելու նախնական համաձայնությանը: Թուրքական իշխանություններն ակնարկում էին, որ պատրաստ են չեղյալ հայտարարել այդ գործարքը և ամերիկացիների փոխարեն մարտական ուղղաթիռներ ձեռք բերել ուս-խորայելական համատեղ կոնսորցիումից:

Թուրքական այս սպառնալիքները որոշակի ազդեցություն ունեցան առաջին հերթին ԱՄՆ գործադիր իշխանության վրա: Հայոց ցեղասպանության բանաձևի քննարկումն ԱՄՆ ներկայացուցիչների պալատում նախատեսված էր 2000 թ. հոկտեմբերի 19-ին: Քննարկումից մեկ օր առաջ ԱՄՆ նախագահ Բիլ Բլինթոնը հատուկ ուղերձով դիմեց Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դենիս Հասթերթին: Նշելով, որ բանաձևի ընդունումը զգալի բացասական հետևանքներ կունենա Մերձավոր Արևելքում ԱՄՆ կենսական շահերի, ինչպես նաև Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանն ուղղված ԱՄՆ ջանքերի վրա՝ Բիլ Բլինթոնը կոչ էր անում Դենիս Հասթերթին օրակարգից հանել բանաձևի քննարկումը:

<sup>26</sup> Большинство конгрессменов - за армянскую резолюцию, [http://www.ng.ru/eis/2000-10-14/5\\_resolution.html](http://www.ng.ru/eis/2000-10-14/5_resolution.html).

<sup>27</sup> Բարսեղյան Լ., նշվ. աշխ. էջ 41-44:

2000 թ. հոկտեմբերի 19-ին Ներկայացուցիչների պալատի լիազու- մար նիստից ընդամենը մի քանի բույե առաջ Դենիս Հասթերը նիստի օրակարգից հանեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին քա- նաձևի քննարկումը:<sup>28</sup>

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ արդեն 2005 թ. ԱՄՆ մամու- լում սկսեցին շրջանառվել տեղեկություններ, որոնց համաձայն Հաս- քերթի կողմից այս որոշումն ընդունելու փաստի վրա զգալի ազդեցու- րյուն է թողել նաև թուրքական լոբբիստական կազմակերպությունների աշխատանքը:

Այդ տեղեկությունների համաձայն, Հետաքննությունների Դաշնա- յին Բյուրոյի թարգմանիչ Միքել Էդմոնդսը 2005 թ. հանդես էր եկել սեն- սացիոն քացահայտումներով՝ հայտարարելով, որ ՀԴԲ կողմից զաղտնալսված խոսակցությունների՝ իր կողմից իրականացված թարգմանությունները վկայում են ԱՄՆ օրենսդիրների և ազգությամբ թուրք ԱՄՆ քաղաքացիների մասնակցությամբ կոռուպցիոն խոշոր գործարքների մասին: Այդ հայտարարություններից հետո Էդմոնդսը հեռացվել էր Հետաքննությունների դաշնային բյուրոյից, իսկ նախա- գահ Ջորջ Բուշ Կրտսերի վարչակազմն ամեն կերպ փորձել էր կանխել այս սկանդալի հրապարակայնացումը: Էդմոնդսի վկայությունների համաձայն, ազգությամբ թուրք ԱՄՆ որոշ քաղաքացիներ կասկածելի գործարքներ են կատարել նաև Դենիս Հասթերի հետ: Այս խնդրին ներգրավված է եղել ազգությամբ թուրք Դիկերսոնների ընտանիքը, որը սերտ առնչություններ է ունեցել ԱՄՆ-ի թուրքական խոշոր լոբբիս- տական կազմակերպություններից մեկի՝ Ամերիկայի թուրքական խորհրդի հետ: Էդմոնդսը նաև նշել է, որ ձայնագրված խոսակցություն- ներում ուղղակի հիշատակություն կա 2000 թ. աշնանը ԱՄՆ Ներկա- յացուցիչների պալատի կողմից Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունման մասին:<sup>29</sup>

<sup>28</sup> Բարսեղյան Լ., նշվ. աշխ., էջ 63-65:

<sup>29</sup> GOP Criminal Flip-Flop: Was Denny Hastert Bribed By Turkish Agents, <http://blogcritics.org/politics/article/gop-criminal-flip-flop-was-denny>.

2000 թ. հոկտեմբերին ԱՄՆ Կոնգրեսի կողմից Հայոց ցեղասպա- նության բանաձևի ճանաչումը կանխելու ուղղությամբ զգալի աշխա- տանքներ են կատարվել նաև ԱՄՆ հրեական լոբբիի կողմից: Կոնգրես- սականներին ուղղված նամակներում, ինչպես նաև նրանց հետ կայա- ցած հանդիպումների ընթացքում հրեական լոբբիի ներկայացուցիչնե- րը նշում էին, որ բանաձևի ընդունումը լուրջ հետևանքներ կունենա ոչ միայն Թուրքիա - ԱՄՆ, այլև Թուրքիա - Իսրայել հարաբերություննե- ռի վրա, հավելյալ լարվածություն կստեղծի Մերձավոր Արևելքում և քաղաքական ազդեցություն կունենա Իսրայելի անվտանգության վրա: Բանաձևի ընդունումը կանխելու խնդրանքով նախագահ Քլինթոնին էր դիմել նաև Իսրայելի արտգործնախարար Շիմոն Պերեսը:<sup>30</sup>

Չնայած ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի կողմից Հայոց ցե-ղասպանությունը ճանաչող բանաձևը չընդունվեց, այս խնդրում երկ- կողմ լարվածությունն ու հարաբերությունների խոցելի բնույթը այն քանի վկայությունն էր, որ չնայած կողմերը հայտարարում էին հարա- բերությունների ռազմավարական նշանակության և կարևորության մասին, այնուամենայնիվ, այդտեղ աստիճանաբար սկսել էին լուրջ խնդիրներ ի հայտ գալ: Միաժամանակ ԱՄՆ Կոնգրեսում 2000 թ. աշ- նանը տեղի ունեցած քննարկումները որոշակիորեն նպաստեցին հայ- թուրքական երկխոսության նախաձեռնման նպատակով ԱՄՆ իշխա- նությունների կողմից կոնկրետ քայլերի իրականացմանը:

### *1.3 Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեությունը*

ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում Հայոց ցեղասպանության գործոնի քննարկման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակու-

<sup>30</sup> Moorad Mooradian, Reconciliation: A Case Study of the Turkish-Armenian Reconciliation Commission, Institute for Conflict Analyses and Resolution, George Mason University, Working Paper N 24, March 2004, p. 9.

բյուրն ունի Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի՝ (ԹՀՀՀ) գործունեության ներկայացումը:

Քաղաքացիական երկխոսության մակարդակում հայ-թուրքական շփումներ կազմակերպելու խնդիրն առաջին անգամ բարձրացվել է 1999 թ. աշնանը ԱՄՆ Պետքարտուղարի Եվրոպայի խնդիրներով օգնական Մարկ Գրոսմանի կողմից\* Ամերիկայի հայկական համագումարի հոգաբարձուների խորհրդի նախագահ Վան Գրիգորյանի հետ հանդիպման ընթացքում: Այն կայացել էր Հայաստանի արտգործնախարար Վ. Օսկանյանի խնդրանքով և նպատակն էր ԱՄՆ իշխանություններին ներկայացնել Հայաստանի դժգոհությունը ԵԱՀԿ 1999 թ. գազաքննաժողովը Ստամբուլում անցկացնելու որոշման կապակցությամբ: Հանդիպման ժամանակ Գրոսմանը խորհուրդ է տալիս գազաքննաժողովի անցկացմանը խոչընդոտելու փոխարեն քայլեր ձեռնարկել Թուրքիայի հետ երկխոսություն սկսելու ուղղությամբ: Նույն 1999 թ. Պետդեպարտամենտում աշխատանքի էր անցել հակամարտությունների կարգավորման գծով մասնագետ Դեյվիդ Ֆիլիպսը, որը մինչ այդ զբաղվել էր Հունաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակությունների միջև շփումներ հաստատելու առաքելությամբ: Գրոսմանը հայ-թուրքական հարաբերություններում հնարավոր երկխոսություն սկսելու խնդիրը հանձնարարում է Ֆիլիպսին: Հայ-թուրքական շփումներ կազմակերպելու խնդրով Ֆիլիպսը հանդիպումներ է ունենում Թուրքիայի Պատմական ընկերակցության նախագահ Օրհան Միլիերի, ինչպես նաև Հայկական ազգային ինստիտուտի ներկայացուցիչ Ռոբերտ Գալուստյանի հետ: Կողմերը քննարկում են համատեղ «20-րդ դարի սկզբում հայերի և թուրքերի ազգային ինքնության ձևավորման շուրջ» բեմադրվ սեմինար կազմակերպելու հնարավորությունը, սակայն Միլիերի արմատական տեսակետների պատճառով այս գործընթացը ձախողվում է:

Ֆիլիպսն այնուհետև այս գործընթացի մեջ ներգրավում է թուրքական Մաքանչի համալսարանի ներկայացուցիչներին, մասնավորապես, սոցիալական գիտությունների ֆակուլտետի դեկան Ահմետ Էվինին: Ի վերջո 2000 թ. հունիսի 10-ին Վիեննայի դիվանագիտական ակադեմիայում կազմակերպվում է «Հայ և թուրք գիտնականների և քաղաքացիական հատվածի ներկայացուցիչների քննարկումը», որին թուրքական կողմից մասնակցում են նաև պատմաբան Հալիլ Բերկբայը և Թուրքիայի առավել հայտնի վերլուծական կենտրոններից մեկի՝ «Թուրքական տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամի» տնօրեն Օզդեմ Սանբերկը, որը մինչ այդ զբաղեցրել էր Մեծ Բրիտանիայում Թուրքիայի դեսպանի պաշտոնը: Հայկական կողմից հանդիպմանը մասնակցել են Հայկական ազգային ինստիտուտի տնօրեն Ռուբեն Աղալյանը, Վեսելյան համալսարանից Խաչիկ Թողլյանը և Երևանի «Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի» տնօրեն Թևան Պողոսյանը:<sup>31</sup>

Հանդիպումից մի քանի շաբաթ անց Հալիլ Բերկբայը թուրքական «Ռադիկալ» թերթին տված «Հատուկ կազմակերպությունն է սպանել հայերին» հարցազրույցում նշեց 1890-ական թվականներին Աբդուլ Համիդի կողմից կազմակերպված կոտորածների, ինչպես նաև 1915 թ. «Հատուկ կազմակերպության» ստեղծման, կալանավորների միջոցով դրա համալրման և վերջինիս կողմից հայերի զանգվածային կոտորածներ իրականացնելու մասին՝ հայտարարելով, որ հարկադիր տեղահանության ընթացքում նվազագույնը 600.000 հայ է սպանվել:<sup>32</sup> Հարցազրույցից հետո Բերկբայը բազմաթիվ քննադատությունների արժանացավ, նրա հասցեին մի շարք սպառնալից նամակներ ուղղվեցին:

<sup>31</sup> Phillips L. David, Unsilencing the Past: Track two Diplomacy and Turkish-Armenian Reconciliation, Berghahn Books, 2005, p. 20-24.

<sup>32</sup> "A Special Organization Killed Armenians" <http://www.atour.com/~aahgn/news/20010105d.html>

\* Գրոսմանը լավատեղյակ էր Թուրքիային առնչվող խնդիրներին: Նա 1992 թ. զբաղեցնում էր Թուրքիայում ԱՄՆ փոխդեսպանի պաշտոնը

Դեյվիդ Ֆիլիպսի կողմից հայ-թուրքական ոչ կառավարական շփումներ հաստատելու ջանքերը համընկան 2000 թ. ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի կողմից թիվ 596 բանաձևի քննարկումների հետ:

Բանաձևի ընդունման հավանականությունը հարկադրեց թուրքական իշխանություններին ակտիվացնել շփումները ԱՄՆ իշխանությունների հետ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման խնդրում: 2000 թ. աշնանը Վաշինգտոնում մի շարք հանդիպումներ կայացան Պետքարտուղարի նորանկախ պետությունների գծով օգնական Մտիվեն Մեստանովիչի, վերջինիս տեղակալ Դենիել Ֆրիդի և թուրքական ներկայացուցիչների միջև՝ Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման խնդրով: Քանի որ հայ-թուրքական շփումների կազմակերպումը Պետքարտուղարությունը հանձնարարել էր Դեյվիդ Ֆիլիպսին, նա ևս հանդիպում ունեցավ ԱՄՆ-ում թուրքական դեսպանատան աշխատակցի հետ: Վերջինս նշեց, որ Թուրքիայի արտաքին գործերի նախարարը հակված է հայ-թուրքական հաշտեցման գործընթացի կազմակերպմանը:

Հայաստանի իշխանությունները ևս հայտարարեցին հաշտեցման և ճշմարտության գործընթացին մասնակցելու պատրաստակամության մասին: Մեստանովիչի և Ֆրիդի հետ հանդիպումների ընթացքում Վան Գրիգորյանը հաստատեց պաշտոնական Հայաստանի պատրաստակամությունը՝ մասնակցել այդ գործընթացին: Միաժամանակ նա նշեց, որ պետք է բացառել այդ շփումներում ցեղասպանության իրողության խնդրի քննարկումը: Վան Գրիգորյանը նաև հայտարարել էր, որ հնարավոր շփումները չպետք է որևէ ազդեցություն ունեն Ներկայացուցիչների պալատում ընթացող թիվ 596 բանաձևի քննարկումների վրա:

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի օրակարգից Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևը հանելուց հետո ԱՄՆ պետդեսպարտամենտի աջակցությամբ Դեյվիդ Ֆիլիպսը շարունակեց հայ-թուրքական երկխոսության մեկնարկին ուղղված իր քայլերը:

Ի վերջո ԱՄՆ պետդեսպարտամենտում հանգեցին այն գաղափարին, որ երկխոսության մեկնարկի լավագույն տարբերակը նախկինում

պետական համակարգում աշխատած, դիվանագիտական շփումների որոշակի փորձ ունեցող մասնավոր անձանցից կազմված հանձնաժողովի ձևավորումն է:<sup>33</sup>

ԹՀՀՀ գործունեության մասին պաշտոնապես հայտարարվեց 2001 թ. հուլիսի 10-ին: Հանձնաժողովում ընդգրկված էին 10 անդամներ՝ չորս հայ և վեց թուրք: Հայկական կողմը ներկայացնում էին ՀՀ նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը, Սիրիայում ՀՀ նախկին դեսպան Դավիթ Հովհաննիսյանը, Ռուսաստանի հայերի միության վարչության անդամ Անդրանիկ Միքրանյանը և Վան Գրիգորյանը: Թուրքական կողմից հանձնաժողովում ընդգրկված էին նախկին դեսպան Գյունդուգ Աքթանը, Ուսթուն Էրգուդերը (Բողազի համալսարանի նախկին ռեկտոր), ավիացիայի գեներալ-լեյտենանտ Շադի Էրգուվենչը, Մեծ Բրիտանիայում Թուրքիայի նախկին դեսպան Օզդեմ Մանբերկը, հոգեբան Վամիկ Վոլկանը, և Թուրքիայի նախկին արտգործնախարար Իլթեր Թուրքմենը: Հանձնաժողովի գործունեությունը համակարգում էր Դեյվիդ Ֆիլիպսը:

Հետաքրքիր է, որ հանձնաժողովի անդամները փորձում էին հերքել ԱՄՆ որևէ մասնակցությունը նշված գործընթացին՝ հայտարարելով, որ հանձնաժողովի ստեղծման նախաձեռնությունը պատկանում է Վիեննայի դիվանագիտական ակադեմիային և Ժնևի հումանիտար ինստիտուտին:

Սակայն ամերիկյան Պետդեսպարտամենտը ոչ միայն կանգնած էր հանձնաժողովի ստեղծման ակունքներում, այլև մասնակցում էր դրա աշխատանքների ֆինանսավորմանը: «Ազգի» 2001 թ. հոկտեմբերի 16-ի համարում տպագրված «ԱՄՆ պետդեսպարտամենտը 1 միլիոն դոլար դրամաշնորհ է տվել հաշտարարների հանձնաժողովին» հոդվածում նշվում էր, որ ԱՄՆ Կոնգրեսի «Կոնգրեսական հետազոտությունների ծառայության» «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի» վերաբերյալ չորս էջանոց հաղորդագրության մեջ նշվել է, որ Պետդեսպարտամենտը ֆինանսական օժանդակություն է տրամադրում

<sup>33</sup> David Phillips, *ibid.*, p. 31-34.

ԹՀՀՀ-ի գործունեությանը: Հրապարակման համաձայն, ԱՄՆ պետդեպարտամենտը որոշակի գումար է տրամադրել Վաշինգտոնի ամերիկյան համալսարանին, իսկ վերջինս հակամարտությունների կարգավորման ծրագրի շրջանակներում «որամաշնորհի ձևով» գումարը փոխանցել է ԹՀՀՀ-ին:<sup>34</sup>

Հանձնաժողովի հաջող գործունեության խնդրում ամերիկյան իշխանությունների շահագրգռվածության մասին է վկայում նաև հուլիսի 18-ին ամերիկյան ազդեցիկ «Վաշինգտոն Թայմս» պարբերականում հրապարակված «Թուրքիան և Հայաստանը ճիշտ ճանապարհի վրա են» հոդվածը, որտեղ նշվում էր, որ երկկողմ հարաբերությունների նորմալացումն առաջին հերթին դրական ազդեցություն կունենա Հայաստանի տնտեսության վրա:<sup>35</sup>

Ռուսական մամուլում ևս հանձնաժողովի ստեղծումն անուղղակիորեն կապվում էր ԱՄՆ քաղաքականության և շահերի հետ: 2001 թ. հուլիսի 18-ին «Նեգավիսիմայա Գազետա» պարբերականում հրապարակվեց «Հայ-թուրքական տանգո ամերիկյան ոճով» հոդվածը: Այստեղ նշվում էր, որ Թուրքիան որոշել է դուրս գալ Ադրբեյջանի «քաղաքական պատանդի» կարգավիճակից և նպատակ ունի տարածաշրջանում սեփական խաղ սկսել, ինչն արժանանում է Անկարայի ռազմավարական դաշնակից ԱՄՆ-ի աջակցությանը: Վաշինգտոնը քաջ գիտակցում է, որ ձևավորված հանձնաժողովը կարող է ծառայել որպես և՛ Բաքվի, և՛ Երևանի նկատմամբ քաղաքական եւ հոգեբանական ճնշման միջոց: Բաքվին կարելի է վախեցնել հայ-թուրքական սահմանի ապաշրջափակմամբ եւ Հայաստանի ու Թուրքիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատումով, իսկ մյուս կողմից պաշտոնական Երևանին դնել ներքին և արտաքին քաղաքական չափազանց բարդ իրավիճակի մեջ, ինչը կարող է ավելորդ խնդիրներ առաջացնել ինչպես հայ հասարակության տարբեր շրջանակների

միջև, այնպես էլ Հայաստանի եւ նրա մերձակա դաշնակիցների՝ Իրանի կամ Ռուսաստանի հետ հարաբերություններում:<sup>36</sup>

ԹՀՀՀ ստեղծումը որոշակի լարվածություն առաջ բերեց նաև ԱՄՆ-ի հայկական հիմնական երկու կազմակերպությունների միջև: Եթե ԱՀՀ-ն ուղղակիորեն ներգրավված էր այդ գործընթացում, ապա ԱՀԱԿ-ը միանշանակ դեմ էր արտահայտվում հանձնաժողովի ստեղծմանը:<sup>37</sup>

Հանձնաժողովը քննադատության էր արժանանում նաև սեփական գործունեության արդյունքում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը խոչընդոտելու համար: 2001 թ. հոկտեմբերի 29-ին հանձնաժողովի հայ անդամներին ուղղված կոչով հանդես եկավ Եվրոպայի հայերի ֆորումը: Նշելով, որ ԹՀՀՀ աշխատանքները վկայակոչելով Գերմանիայի խորհրդարանը հրաժարվել է քննարկել Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը, իսկ Եվրախորհրդարանը հոկտեմբերի 25-ին ընդունված բանաձևում, (որտեղ բերվում էին Եվրամիությանն անդամակցելու համար Թուրքիային ներկայացվող պահանջները) չի ներառել Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջը, կազմակերպությունը հայ անդամներին կոչ էր անում հրաժարվել հանձնաժողովի հետագա աշխատանքներին մասնակցելուց:<sup>38</sup>

Գեյվիդ Ֆիլիպսը որոշ մանրամասներ է ներկայացնում հանձնաժողովի հանդիպումների ընթացքից: ԹՀՀՀ հայ անդամները նախընտրում էին կենտրոնանալ կոնկրետ հարցերի շուրջ, ինչպիսիք էին սահմանների բացումը և դիվանագիտական հարաբերությունների հաստատումը: Թուրքերն էլ հաճախ հետդարձ էին կատարում թուրքական պաշտոնական տեսակետին, փորձելով կապել թուրք-հայկական հաշտեցումը և Լեռնային Ղարաբաղի խնդիրը:

ԹՀՀՀ-ն նախապես շեշտադրում է կատարել համագործակցությանն ուղղված փոքր քայլերի վրա, որոնք հիմք կստեղծեն առավել

<sup>34</sup> Ազգ, 16-ը հոկտեմբեր, 2001, <http://www.azg.am/AM/2001101611>

<sup>35</sup> Անանյան Ա., Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ, (թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին), Երևան 2003, էջ 39:

<sup>36</sup> [http://www.ng.ru/cis/2001-07-18/5\\_tango.html](http://www.ng.ru/cis/2001-07-18/5_tango.html)

<sup>37</sup> Ազգ, 1-ը Օգոստոս, 2001, <http://www.azg.am/AM/2001080109>

<sup>38</sup> Անանյան Ա., նշվ. աշխ. էջ 72-73:

կենտրոնական հարցեր բարձրացնելու համար: Սակայն հանձնաժողովն ի վիճակի չէր խուսափել ցեղասպանության հարցի քննարկումից: Ի վերջո, նա դիմեց Անցումային արդարադատության միջազգային կենտրոնին՝ 1915 թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցածի նկատմամբ 1948 թ. ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրառելիության խնդրում եզրակացություն ստանալու խնդրով:<sup>39</sup>

Կենտրոնն իր եզրակացությունը հրապարակեց 2003 թ. փետրվարին: Նշվում էր, 1915 թ. դեպքերը «ամբողջության մեջ կրում էին ցեղասպանության բոլոր տարրերը, ինչպես որ սահմանված է Կոնվենցիայով»: Միաժամանակ դատարանը հանգել էր այն եզրահանգման, որ որևէ իրավական, ֆինանսական կամ տարածքային պահանջներ, որոնք բխում են այդ դեպքերից, կոնվենցիայի հիման վրա չեն կարող ներկայացվել որևէ անհատի կամ պետության:<sup>40</sup> Չցանկանալով խորանալ այս որոշման իրավական ասպեկտի մեջ՝ հարկ է նշել, որ ամեն դեպքում, այն կրում է որոշակի քաղաքական ենթատեքստ՝ փորձ անելով միաժամանակ գոհացնել թե հայկական և թե թուրքական կողմին:

Չեկույցի հրապարակումից հետո հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի գործունեությունն սկսեց անկում ապրել: Չնայած անցկացվեցին ևս մի քանի հանդիպումներ՝ 2003 թ. հունիսի 6-ից 7-ը Ստամբուլում, 2004 թ. հունվարի 11-13ը Լոնդոնում, սակայն աստիճանաբար պարզ էր դառնում, որ հանձնաժողովի հետագա գործունեությունն իր նպատակին չի ծառայում: Այդ մասին է վկայում նաև հանձնաժողովի երեք թուրք անդամների հրաժարականը և նրանց փոխարինումը չորս նոր անդամներով: Հանձնաժողովի վերջին նիստն անցկացվեց Մոսկվայում 2004 թ. ապրիլի 12-ից 14-ը: ԹՀՀՀ-ն հայտարարեց, որ ավարտում է իր գործունեությունը որպես հանձնաժողով: «Մենք զգում ենք, որ քաղաքացիական հասարակությունների շփումներում առաջընթացն անընդմեջ է եւ ժամանակի հետ միայն աճելու

<sup>39</sup> Armenia – Turkey. The Great Debate. The TARC Experience, [http://www.esiweb.org/index.php?lang=en&id=322&debate\\_ID=2&slide\\_ID=22](http://www.esiweb.org/index.php?lang=en&id=322&debate_ID=2&slide_ID=22)

<sup>40</sup> Ամբողջական եզրակացությունը տես՝ <http://www1.american.edu/cgp/track2/data/ICTJreportEnglish.pdf>.

լ»,- ասվում էր հանձնաժողովի տարածած հայտարարության մեջ: Հանձնաժողովը մտադրվել էր նաև աջակցել հայ-թուրքական խորհրդակցական խմբի ստեղծմանը, որը պետք է նիստեր գումարեր առնվազն տարին մեկ անգամ՝ կարծիքներ փոխանակելու, հայ-թուրքական հարաբերություններում առաջընթացը քննելու եւ փոխհարաբերությունները բարելավելուն ուղղված առաջարկներ ներկայացնելու համար:<sup>41</sup>

#### 1.4 ՀՀ պաշտոնական դիրքորոշումը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրում

Ներկայացնելով 1991-2007 թթ. ԱՄՆ Թուրքիա հարաբերություններում Հայոց ցեղասպանության ճանաչման գործոնի խնդիրը, անիրաժեշտ է նշել, որ այս հարցում որոշակի դերակատարում ուներ նաև ՀՀ կողմից իրականացվող արտաքին քաղաքականությունը և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրում Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը:

Արագորեն փոփոխվող միջազգային իրադրության պայմաններում նորանկախ Հայաստանի ղեկավարությունը հարկադրված էր հստակեցնել սեփական դիրքորոշումը հարևանների, այդ թվում նաև Թուրքիայի հետ հարաբերությունների հարցում: 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունված Հայաստանի անկախության հռչակագրում ձայների նվազագույն առավելությամբ ընդգրկվել էր 11-րդ կետը, որի համաձայն Հայաստանի Հանրապետությունը սատարում էր Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում իրականացված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: Այնուամենայնիվ, նորանկախ Հայաստանի իշխանությունները Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը չէին ընդգրկել Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում: 1990 թ. նոյեմբերին ՀՀ

<sup>41</sup> Հայկական ժամանակ, 16-ը ապրիլ, 2004 <http://www.hzh.am/Arkhiw/2004/Apri/16.04/16.04.04.html>.

երկրորդ համագումարում Տեր Պետրոսյանը հայտարարեց, որ անհրաժեշտ է հրաժարվել երրորդ պետությունների վրա հույս դնելու գաղափարից և փնտրել ազգի գոյության նոր, ավելի հուսալի երաշխքիներ: Նա նշեց, որ նմանատիպ երաշխիքներից մեկը Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորումն է:<sup>42</sup>

1991 թ. ապրիլին ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Վուրալի հետ Երևանում կայացած հանդիպման ընթացքում Տեր Պետրոսյանը հայտարարեց, որ Հայաստանը պատրաստ է Թուրքիայի հետ ցանկացած փոխշահավետ համագործակցության և որևէ տարածքային պահանջներ չունի Թուրքիայի նկատմամբ:<sup>43</sup> 1991 թ. սեպտեմբերին Երևանում հանդիպելով ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի պատվիրակության հետ՝ Տեր Պետրոսյանը հայտարարել էր, որ հայ և թուրք ժողովուրդների միջև առկա են լուրջ պատմական հակասություններ և հայ ժողովուրդը չի կարող մոռանալ ցեղասպանության մասին, սակայն չնայած այդ բոլորին, Հայաստանը և Թուրքիան պետք է նորմալացնեն երկկողմ հարաբերությունները:<sup>44</sup>

Սակայն թուրքական կողմը ի սկզբանե հետամուտ էր Հայաստանի հետ հարաբերություններում նախապայմանների թելադրմանը: Այսպես, 1992 թ. հունվարին Հայաստանի՝ ԵԱՀԿ-ին անդամակցելու բանակցությունների ժամանակ թուրքական կողմը հայտարարեց որ Հայաստանը տարածքային պահանջներ ունի Թուրքիայի նկատմամբ և Հայաստանից պահանջեց.

Առաջին. հաստատել սահմանների անձեռնմխելիությունը և վավերացնել Կարսի ու Մոսկվայի պայմանագրերը, երկրորդ. չհովանավորել ահաբեկչությանը և օգնություն ցույց չտալ այնպիսի կազմակերպությունների, որոնք պայքարում են տարածքային պահանջների համար, երրորդ. ընդունել իրավական ակտեր, որոնք բացառեն ռասայա-

<sup>42</sup> Անանյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում, (1991-2004 թթ.), Երևան 2006, էջ 27:

<sup>43</sup> Независимая Газета, 14 мая, 1991.

<sup>44</sup> Ազգ, 11-ը սեպտեմբեր, 1991

կան, կրոնական, էթնիկական թշնամությունը ինչպես Հայաստանում, այնպես էլ ԵԱՀԿ այլ պետությունների հանդեպ:

Թուրքական պատվիրակությունը Հայաստանի կողմից նշված պահանջները կատարելու մասին գրավոր փաստաթղթի չներկայացման դեպքում սպառնում էր վետո կիրառել Հայաստանի անդամակցության հարցում: Հայկական պատվիրակությունն ի պատասխան հայտարարեց, որ Հայաստանը ցանկանում է բարելավել հարաբերությունները Թուրքիայի հետ առանց որևէ նախապայմանի և պատրաստ է քննարկել թուրքական կողմի բարձրագրած հարցերը ԵԱՀԿ-ի սկզբունքների համաձայն, երկկողմ բանակցությունների ընթացքում: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ հայ և թուրք պատվիրակությունների միջև միջնորդի դերակատարություն ստանձնեց ԵԱՀԿ-ում ԱՄՆ պատվիրակությունը, որի ջանքերի շնորհիվ թուրքական կողմը հրաժարվեց իր պահանջներից:<sup>45</sup> Այնուամենայնիվ, չնայած Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի վերաբերյալ այս դիրքորոշմանը, հայ-թուրքական հարաբերություններում նշված ժամանակաշրջանում որևէ լուրջ տեղաշարժ չարձանագրվեց: Ամեն դեպքում Հայաստանի Հանրապետության մասն ղիրքորոշումը ինչ-որ չափով հանգեցնում էր տարբեր պետություններում, նաև ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի դանդաղեցմանը, չնայած հարկ է փաստել, որ տարբեր երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հիմքում առաջին հերթին ընկած են նշված պետությունների սեփական շահերն ու հաշվարկները:

1998-2007 թ. թուրք-ամերիկյան հարաբերություններում Հայոց ցեղասպանության գործոնի ազդեցության տեսանկյունից որոշակի նշանակություն ունեցավ Հայաստանում նոր նախագահի ընտրությունը: 1998 թ. փետրվարի 3-ին նախագահ Լևոն Տեր Պետրոսյանը հրաժարական տվեց: Նույն թվականի մարտին կայացած ընտրությունների արդյունքում նախագահի պաշտոնը զբաղեցրեց Ռոբերտ Քոչարյանը:

<sup>45</sup> Ազգ, 12-ը փետրվար, 1992

Վերջինիս իշխանության հենց սկզբից Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրն ընդգրկեց ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում: Հայոց ցեղասպանության խնդիրը ՀՀ նախագահը բարձրացրեց 1998 թ. ՄԱԿ-ի 53-րդ նստաշրջանում, ինչպես նաև 1999 թ. նոյեմբերին ԵԱՀԿ Ստամբուլյան գագաթնաժողովում:<sup>46</sup> Հայաստանը պաշտոնապես կողմ արտահայտվեց նաև 2000 և 2007 թթ. ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունմանը: Մասնավորապես, 2007 թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ արտաքին գործերի նախարարության մամուլի և տեղեկատվության վարչության պետ Վլադիմիր Կարապետյանը հայտարարեց, որ Հայաստանը ողջունում է Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից թիվ 106 բանաձևի ընդունումը:<sup>47</sup> ՀՀ այս դիրքորոշումը որոշակիորեն նպաստեց միջազգային ասպարեզում, այդ թվում ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ակտիվացմանը:

<sup>46</sup> Անանյան Ա., նշվ. աշխ., էջ 39-40:

<sup>47</sup> <http://www.azatutjun.am/content/article/1590920.html>

## Գլուխ Երկրորդ

### Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 2003-2007 թթ.

#### 2.1 Թուրք-ամերիկյան հարաբերությունները 2003-2007 թթ.

2002 թ. նոյեմբերին Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում իշխանության եկավ չափավոր խլամական «Արդարություն և զարգացում» կուսակցությունը: 2003-2007 թթ. ականատես ենք դառնում թուրք-ամերիկյան հարաբերությունների աստիճանական վատթարացմանը: Թուրքիայում ակտիվորեն քննարկվում էր երկրի արտաքին քաղաքական կողմնորոշումների փոփոխման հնարավորությունը, ընդ որում, հավանական սցենարներից էր ԱՄՆ-ից կախվածության թուլացումը և վերջինիս մրցակիցների հետ հարաբերությունների խորացումը:

Տասնամյակներ շարունակ թուրք-ամերիկյան հարաբերությունները բնորոշվել են որպես ռազմավարական, սակայն 2003-2007 թթ. ընթացքում մեծանուն բնորոշման համար հիմքերը բավականին քիչ են՝ ելնելով թե՛ իրաքյան պատերազմի, և թե՛, ինչն ավելի կարևոր է, արտաքին քաղաքական առաջնահերթությունների տարբեր ընկալումներից: Արդյունքում Մառը պատերազմի առաջին օրերից արմատական վերազնահատման չենթարկված թուրք-ամերիկյան հարաբերությունները լուրջ հարցականի տակ էին դրվում:<sup>48</sup> Հարաբերությունների վատթարացումն ակնհայտ էր նաև թուրք վերլուծաբանների և մեկնաբանների զեկույցներում և հրապարակային հայտարարություններում: Անգամ այնպիսի արևմտամետ մեկնաբան, ինչպիսին Մեյֆի Թասհանն

<sup>48</sup> Ian O. Lesser, Turkey, the United States and the Delusion of Geopolitics” Survival, Vol 48, No 3, Autumn 2006, p. 83, The same point is made in Soner Cagaptay, Turkey at the Crossroads: Preserving Ankara’s Western Orientation (Washington DC: Washington Institute For Near East Policy Studies, 2005)

է, որը երկար ժամանակ հանդես էր գալիս Արևմուտքին ինտեգրվելու կոչերով, քացահայտորեն հայտարարում էր, որ ԱՄՆ-ը չհայտարարված սառը պատերազմ է մղում Թուրքիայի դեմ:<sup>49</sup> 2005թ. Թուրքիայում իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքում հարցվածների 80 տոկոսը կարծիք էր հայտնել, որ ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականությունը սպառնալիք է Թուրքիայի անվտանգությանը:<sup>50</sup> Հարաբերությունների վատթարացման անուղղակի ապացույցներից էր նաև այն փաստը, որ 2005թ. Թուրքիայում առավել շատ վաճառված գրքերից մեկը 2004թ. հրատարակված «Մետաղե Փոթորիկ» նովելն էր, որտեղ նկարագրվում էր թուրք-ամերիկյան ռազմական բախումը իրաքյան Զիրբուք քաղաքի վերահսկողության համար<sup>51</sup>:

Խոսելով 2003-2007 թթ. թուրք-ամերիկյան հարաբերությունների աստիճանական վատթարացման մասին, կարելի է առանձնացնել նման զարգացումների երեք հիմնական պատճառներ: Առաջինը դա Թուրքիայի ներքաղաքական կյանքում տեղի ունեցող դինամիկ փոփոխություններն են, որոնք նկատելի են հատկապես 2002թ. նոյեմբերին իսլամական «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո: Եթե նախկինում թուրքական պետության բոլոր կարևորագույն ոլորտները վերահսկվում էին քեմալական վերնախավի կողմից, այժմ աստիճանաբար այդ վերնախավի ազդեցությունը թուլանում է ի հաշիվ նոր ձևավորվող վերնախավի, որը շատ ավելի մեծ կարևորություն է տալիս Թուրքիայի իսլամական ժառանգությանը, և որի տնտեսական հիմքը Անատոլիայում ձևավորված նոր տնտեսական վերնախավն է ի հակադրություն ավանդական «ստամբուլյան վերնախավի»: Թուրքիայի ներքաղաքական կյանքի այս արմատական փոփոխությունները որոշակի ազդեցություն են թողնում

նաև թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա, թեև այդ ազդեցությունը միանշանակ չէ:

Երկրորդ կարևոր պատճառը մեր կողմից արդեն հիշատակված «սառը պատերազմի» ավարտն է և ԽՍՀՄ փլուզումը, որը հանգեցրեց երկու երկրներին միավորող կարևորագույն գործոններից մեկի՝ «խորհրդային սպառնալիքի» վերացմանը: «Սառը պատերազմի» ավարտից հետո Թուրքիայի և ԱՄՆ-ի մտեցումները որոշակիորեն տարբերվում են ինչպես տարածաշրջանային զարգացումների, անվտանգության առկա և ապագա սպառնալիքների, այնպես էլ տարածաշրջանի առանձին պետությունների հետ հարաբերությունների խնդրում: Այս հանգամանքն ավելի ակնհայտ է Ռուսաստանի, Իրանի և Սիբիրիայի հանդեպ երկու երկրների դիրքորոշումների խնդրում:

Հարաբերությունների աստիճանական սառեցման երրորդ և, թերևս, ամենագլխավոր պատճառը 2003թ. ամերիկյան ներխուժումն է Իրաք, դրան հաջորդած իրադարձությունները և թուրքական կողմի դիրքորոշումը՝ առաջին հերթին քրդական հարցի կապակցությամբ:

Այժմ ավելի հանգամանորեն անդրադառնանք վերոհիշյալ պատճառներին առանձին-առանձին: Ինչպես նշեցինք, երկկողմ հարաբերություններում նկատվող լարվածության հիմնական պատճառներից մեկը թուրքական քաղաքական-պետական համակարգում նկատվող արմատական փոփոխություններն են, որոնց հետևանքով ժամանակակից թուրք հասարակությունն ու պետությունը շատ ավելի դժվար ընկալելի են դարձել ԱՄՆ քաղաքական և վերլուծական շրջանակների համար: Աշխարհիկ քեմալականները (որոնք վերահսկում էին Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությունը 1923թ. հանրապետության հռչակումից ի վեր) շարունակում են զգալի ազդեցություն ունենալ պետական տարբեր ինստիտուտների վրա, (քաղաքական համակարգում նրանց շահերը արտահայտում է Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը), սակայն նրանք հարկադրված են իրենց ազդեցության մի որոշակի հատվածը զիջել այն քաղաքական ուժերին, որոնց հայացքները ձևավորվել են կրոնի ազդեցությամբ, որոնք սերում

<sup>49</sup> Seyfi Tashan, "Is it a Cold War For Turkey?"

[http://www.foreignpolicy.org.tr/documents/270207\\_b.html](http://www.foreignpolicy.org.tr/documents/270207_b.html)

<sup>50</sup> Phillip Gordon and Omer Taspinar, "Turkey on the Brink", Washington Quarterly, Vol 29, No 3, Summer 2006, pp. 65-6.

<sup>51</sup> Fiona Hill and Omer Taspinar, "Turkey and Russia: Axes of the Excluded?", Survival, Vol 48, No 1, Spring 2006, p. 83.

են Անատոլիայի աստիճանաբար հզորացող բիզնես շրջանակներից և որոշակիորեն հակադրվում են «Եվրոպական Թուրքիային»:<sup>52</sup> Այս քաղաքական հոսանքի վառ ներկայացուցիչն է «Արդարություն և զարգացում» կուսակցությունը: Կուսակցությունը ձևավորվեց 2002թ.<sup>53</sup> Թուրքիայի սահմանադրական դատարանի կողմից արգելված իսլամական երկու «Բարեկեցություն» և «Ատաքիմություն» կուսակցությունների հիման վրա: Արդեն 2002թ. նոյեմբերին կայացած խորհրդարանական ընտրություններում այն ստացավ ձայների 35 տոկոսը և ձևավորեց միակուսակցական կառավարություն: Էլ ավելի տպավորիչ էր «Արդարություն և զարգացում» կուսակցության հաղթանակը 2007թ. հուլիսին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններում, երբ այն ստացավ ձայների գրեթե 47 տոկոսը:<sup>54</sup> Ի տարբերություն «Սպիտակ թուրքերի», ինչպես հաճախ անվանում են քեմալական վերնախավին, Թուրքիայում այժմ իշխող կուսակցության ղեկավար շրջանակը շատ ավելի քիչ ազդեցություն է կրել արևմտյան գաղափարների և կառույցների կողմից:

Նմանատիպ փոփոխություններն ակնհայտ են նաև թուրք հասարակության շրջանում: Թուրքիայում իրականացված վերջին սոցիոլոգիական հարցումները վկայում են այստեղ սեկյուլարիզմի հանդեպ հակվածության աստիճանական նվազման մասին: Այսպես, սոցիոլոգիական հեղինակավոր Pew հետազոտական կենտրոնի կողմից 2007թ. իրականացված հարցումները ցույց են տալիս, որ 46 երկրների շարքում վերջին հինգ տարիների ընթացքում Թուրքիան երկրորդն է սեկյուլարիզմի աջակիցների թվի նվազման հարցում: Եթե 2002թ. Թուրքիայում հարցվածների 73 տոկոսն է դրական պատասխանել հետևյալ հարցին՝ «Համաձայն եք, որ կրոնը դա անձնական հավատի խնդիր է, և այն պետք է տարանջատել կառավարության քաղաքակա-

<sup>52</sup> Rajan Menon and Enders S.Wimbush, "The US and Turkey: End of an Alliance?", Survival, Vol. 49, No 2, Summer 2007, p.129  
<sup>53</sup> Svante Cornell and Kemal Kaya, "Turkey's Elections: Democratic Islamists?", SAISPHERE, 2007, p.20-3.

ուրությունից», ապա 2007թ. նույն հարցին դրական է պատասխանել հարցվածների ընդամենը 55 տոկոսը:<sup>54</sup>

Միաժամանակ նշենք, որ սխալ կլիներ քեմալականներին համարել միանշանակ արևմտամետներ, իսկ «Արդարություն և զարգացում» կուսակցության կողմնակիցներին՝ միանշանակ «Արևմուտքի» հակառակորդներ: Վերջին տարիների ընթացքում հենց քեմալականների շրջանում զգալիորեն ավելացել է քննադատությունը ԱՄՆ հասցեին, որին վերջիններս մեղադրում են վարչապետ Ռեջեփ Թայյիփ Էրդողանի կառավարությանը ցուցաբերած աջակցության համար որպես «չսփափոր իսլամական» կառավարություն, որը կարող է հաջող մոդել հանդիսանալ մահմեդական աշխարհի համար: Քեմալականների կարծիքով, նմանատիպ հարցադրումներն առնվազն վիրավորական են թուրքական հանրապետության հենասյունը հանդիսացող գաղափարների համատեքստում: Քեմալականները քննադատում են նաև ամերիկյան և ընդհանրապես արևմտյան գործարար շրջանակներին՝ պնդելով, որ վերջիններս աջակցում են «Արդարություն և զարգացում» կուսակցության քաղաքականությանը: Վերջին տարիներին արևմտյան կապիտալը հսկայական միջոցներ է ներդրել թուրքական տնտեսության մեջ, և, քեմալականների կարծիքով, քանի դեռ կառավարության քաղաքականությունը նպաստում է թուրքական տնտեսության աճին, արևմտյան գործարար շրջանակները, որոնք նաև որոշակի ազդեցություն ունեն իրենց երկրների քաղաքական համակարգի վրա՝ «մատների արանքով» են նայում Թուրքիայի գործող կառավարության՝ երկիրն աստիճանաբար իսլամականացնելու քաղաքականությանը:<sup>55</sup>

Այնուամենայնիվ, չնայած վերջին տարիներին Թուրքիայի ներքաղաքական համակարգում նկատվող արմատական փոփոխությունն-

<sup>54</sup> World Publics Welcome Global Trade-But Not Immigration, 47 Nation Pew Global Attitude Survey, p. 37, See at <http://pewglobal.org/reports/pdf/258.pdf>  
<sup>55</sup> Zeyno Baran, "Turkey Devided", Journal of Democracy, Vol 19, No 1, January 2008, p. 60-1.

րի ազդեցությունը թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա միանշանակ չէ, կարելի է արձանագրել, որ ներքաղաքական շատ ավելի բարդ ներկայանալը դժվարացնում է ԱՄՆ քաղաքական և վերլուծական շրջանակներում Թուրքիայի նկատմամբ հստակ ընկալումների և հետևաբար հստակ քաղաքական ուղենիշի ձևավորման գործընթացը, ինչն իր հերթին նպաստում է երկկողմ հարաբերություններում որոշակի սառնության ձևավորմանը:

Ինչպես նշեցինք, երկկողմ հարաբերություններում նկատվող փոփոխությունների կարևոր պատճառ է նաև ԽՍՀՄ փլուզումը և «Մառը պատերազմի» ավարտը: 1947թ. Թրումենի հայեցակարգի հռչակումից և 1952թ. Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելուց հետո ընդհուպ մինչև 1991թ. դեկտեմբերին ԽՍՀՄ փլուզումը, երկու երկրների միջև ձևավորված ռազմավարական դաշնակցային հարաբերությունների հիմնական պատճառն ակնհայտ էր: Ենթադրյալ խորհրդային վտանգը, ԽՍՀՄ գաղման ամերիկյան քաղաքականությունը և ՆԱՏՕ-ն երկու երկրներին միավորող լուրջ գործոններ էին, և չնայած այս շրջանում ևս ժամանակ առ ժամանակ կողմերի արտաքին քաղաքական շահերը միշտ չէ որ համընկնում էին, այնուամենայնիվ, վերոհիշյալ գործոններն զապող դեր էին կատարում հարաբերությունների կտրուկ վատթարացման դեմ:

ԽՍՀՄ փլուզումից հետո երկու երկրների ղեկավար շրջանակների, ինչպես նաև վերլուծաբանների համար շատ ավելի դժվար է հստակ պատասխան տալ հետևյալ հարցին՝ ի՞նչն է ի վերջո միավորում Թուրքիային և ԱՄՆ-ին: Որպես հնարավոր պատասխան կարող է բերվել երկու երկրների ղեկավար շրջանակների հայտարարվող հակվածությունը ժողովրդավարական արժեքների նկատմամբ: Մակայն այսօր ԱՄՆ-ը սերտ հարաբերություններ ունի այնպիսի երկրների հետ, որտեղ ժողովրդավարության վիճակը բարվոք չէ (Մաուդյան Արարիա, Եգիպտոս, Պակիստան): Բացի այդ, ԱՄՆ-ն անցյալում սերտ դաշնակցային հարաբերություններ էր պահպանում Թուրքիայի հետ նաև այն ժամանակ, երբ թուրքական զինվորական շրջանակները բացահայտորեն հակաժողովրդավարական քայլեր էին իրականացնում:

Թերևս, կարելի է պնդել, որ թուրք-ամերիկյան հարաբերություններում պատմությունը, միասնական արժեքային համակարգն ու մշակութային ընդհանրությունները բավականին թույլ դեր են խաղում:

«Մառը պատերազմի» ավարտն աստիճանաբար առաջ բերեց նաև տարբեր ընկալումներ՝ կապված տարածաշրջանային զարգացումների և ազգային անվտանգությանն սպառնացող հնարավոր վտանգների ընկալման խնդրում: Նման տարրընկալումների օրինակ են ԱՄՆ-ի և Թուրքիայի դիրքորոշումները Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցում, ինչն առավել վառ էր արտահայտվում հատկապես սկսած 2002-2003թթ.: Եթե ԱՄՆ-ը բացահայտորեն անհանգստացած էր Ռուսաստանում նկատվող ժողովրդավարության նահանջից, Վրաստանի և Մոլդովայի տարածքում առկա հակամարտությունների հանդեպ Ռուսաստանի վարած քաղաքականությունից, էներգետիկ ռեսուրսները որպես քաղաքական ազդեցության գործիք կիրառելու փորձերից, ապա այս հարցերը քիչ են անհանգստացնում Թուրքիային, որը վերջին տարիների ընթացքում կտրուկ ընդլայնել է իր տնտեսական կապերը Ռուսաստանի հետ: 2000թ. սկսած երկու երկրների միջև իրականացվող առևտրի ծավալներն զգալիորեն ավելացել են: Արդեն 2003թ. դրանք կազմում էին 6.8 միլիարդ ԱՄՆ դոլար, և Ռուսաստանը Թուրքիայի երկրորդ առևտրային գործընկերն էր Գերմանիայից հետո: Երկու երկրները սերտորեն համագործակցում են նաև էներգետիկ բնագավառում: Թուրքիա ներմուծվող բնական գազի շուրջ 70 տոկոսը գալիս է Ռուսաստանից Սև ծովի հատակով անցնող «Կասպոյա հոսք» գազամուղով: Զգալի աճ է արձանագրել նաև Ռուսաստանից Թուրքիա այցելող զբոսաշրջիկների թիվը: 2004թ. Թուրքիա են այցելել շուրջ 1.7 միլիոն ռուս զբոսաշրջիկներ և այս առումով ռուսները զիջում են միայն գերմանացիներին:<sup>56</sup> Թուրքական ընկերություններն իրենց հերթին ակտիվորեն ներդրումներ են կատարում ռուսական տնտեսության մեջ: 2007թ. Ռուսաստանում կատարված թուրքական

<sup>56</sup> See "An Historic Turkish-Russian Exchange", Turkey Now (website of the Turkish-US Business Council), January 2005, at <http://www.turkey-now.org/default.aspx?pgID=111>.

ներդրումների ծավալը կազմել է 28 միլիարդ դոլար՝ 2005թ. համեմատությամբ աճելով 10 միլիարդ դոլարով:<sup>57</sup>

Երկու երկրների շահերը որոշակիորեն համընկնում են նաև Մերձավոր Արևելքում: Թե՛ Թուրքիան և թե՛ Ռուսաստանը լուրջ վերապահումներ ունեն Իրաք ամերիկյան ներխուժման հարցում, և երկու պետություններն էլ հանդես են գալիս Իրանի միջուկային ծրագրի շուրջ ստեղծված վիճակի խաղաղ հանգուցալուծման օգտին:<sup>58</sup> Ռուսաստանը և Թուրքիան աստիճանաբար խորացնում են իրենց հարաբերությունները Սիրիայի և Իրանի հետ, ինչը որոշակիորեն չեզոքացնում էր նշված երկու պետությունները մեկուսացնելու ԱՄՆ ջանքերը: Միաժամանակ թե՛ Թուրքիայում և թե՛ Ռուսաստանում ուժեղանում են ազգայնական և հակաարևմտյան տրամադրությունները, որոնք աստիճանաբար թափանցում են նաև քաղաքական շրջանակներ:<sup>59</sup>

2003-2007 թթ. թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա բացասական ազդեցություն էր թողնում նաև Իրանի և Սիրիայի նկատմամբ երկու երկրների դիրքորոշումների տարբերությունը: Ինչպես հայտնի է, Իրանը նախագահ Բուշ Կրտսերի վարչակազմի կողմից շրջանառության մեջ մտցված «Չարիքի առանցքի» մաս է կազմում: ԱՄՆ-ն Իրանին մեղադրում էր միջազգային ահաբեկչությանն աջակցելու (առաջին հերթին դա վերաբերում է Լիբանանում գործող «Հեզբոլլա» կազմակերպությանը), միջուկային զենք ձեռք բերելու մտադրություն ունենալու և Իրաքում ամերիկյան ուժերի դեմ պայքարող ապստամբների զենք և զինամթերք մատակարարելու մեջ: Միջազգային ահաբեկչությանն աջակցելու խնդրում ԱՄՆ-ն մեղադրանքներ էր ուղղում նաև Սիրիային՝ պնդելով, որ այդ երկիրը զգալի աջակցություն է ցու-

<sup>57</sup> Andrew Purvis, "Istanbul's Economic Tension. A Lawsuit Threatens to Undo the Pro-Islamic Government's Record of Reform and Growth" *Time Europe*, Vol. 171, No 20, May 19, 2008, p. 51.

<sup>58</sup> Fiona Hill, Omer Taspinar, "Russia and Turkey in the Caucasus: Moving Together to Preserve the Status Quo?", IFRI, Research Programme Russia/NIS, Russie.Nei.Visions N 8, January 2006, p. 7.

<sup>59</sup> Marlène Laurelle, *Russo-Turkish Rapprochement through the Idea of Eurasia: Alexander Dugin's Networks in Turkey*. The Jamestown Foundation, April 2008, p. 3.

ցաբերում ինչպես «Հեզբոլլային», այնպես էլ Պաղեստինյան ինքնավարության տարածքում գործող «ՀԱՄԱՍ» կազմակերպությանը, որը փաստացի վերահսկում է Գազայի հատվածը: ԱՄՆ-ը տարբեր քայլեր է ձեռնարկում միջազգային հարաբերություններում նշված երկրների մեկուսացման ուղղությամբ՝ առաջին հերթին տարածաշրջանի մյուս պետություններից պահանջելով խզել, կամ առնվազն սահմանափակել հարաբերությունները վերոհիշյալ երկրների հետ: Սակայն եթե 1990-ական թվականներին թուրք-իրանական և առաջին հերթին թուրք-սիրիական հարաբերությունները բավականաչափ լարված էին, ապա «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո այստեղ նկատվում են որոշակի փոփոխություններ՝ ուղղված հարաբերությունների աստիճանական բարելավմանը, ինչն, անշուշտ, չի կարող գոհացնել պաշտոնական Վաշինգտոնին և որոշակի ազդեցություն չունենալ թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա:

Թուրք-իրանական հարաբերությունները որոշակի ջերմացման գործընթաց են ապրում, այդ թվում նաև անվտանգության ոլորտում: 2004թ. հուլիսին Թուրքիայի վարչապետ Էրդողանի՝ Թեհրան կատարած այցելության ընթացքում կողմերը ստորագրեցին համաձայնագիր՝ անվտանգության ոլորտում համագործակցելու վերաբերյալ: Համաձայնագրում Քրդական աշխատավորական կուսակցությունը հստակորեն սահմանվում է որպես ահաբեկչական կազմակերպություն:<sup>60</sup>

Թուրք-իրանական հարաբերությունների բարելավման գործում զգալի դերակատարում ունի նաև համագործակցությունը էներգետիկ բնագավառում: 2007թ. հուլիսի 13-ին Անկարայում երկու երկրները փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին բնական գազը Իրանից և Թուրքմենստանից Թուրքիա և Թուրքիայի տարածքով էլ Եվրոպա արտահանելու վերաբերյալ: Հուշագրի համաձայն, Իրանից և Իրանի

<sup>60</sup> Stephan F. Larabee, "Turkey Rediscovered the Middle East, *Foreign Affairs*, July-August 2007, see at <http://www.foreignaffairs.org/20070701faessay86408/f-stephenlarabee/turkey-rediscovered-the-middle-east.html>

տարածքով Թուրքմենստանից Թուրքիա է ներկրվելու տարեկան 30 միլիարդ խորանարդ մետր գազ, որից 20 միլիարդը մատակարարելու է Իրանը:<sup>61</sup>

Թուրքիան հանդես է գալիս Իրանի միջուկային ծրագրի շուրջ ստեղծված իրավիճակի խաղաղ հանգուցարումնան օգտին՝ ճանաչելով խաղաղ միջուկային տեխնոլոգիաներ ունենալու Իրանի իրավունքը: Թուրքական կողմի նման դիրքորոշումը ևս նպաստում է երկկողմ հարաբերությունների ջերմացմանը:

Վերջին տարիներին զգալիորեն բարելավվել են նաև թուրք-սիրիական հարաբերությունները, ինչի ապացույցն էր 2005թ. հունվարին Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադի՝ Անկարա կատարած այցելությունը, որը Սիրիայի նախագահի առաջին այցելությունն էր Թուրքիա 1946թ. ի վեր: Պաշտոնական Վաշինգտոնը փորձում էր հետ պահել Թուրքիային Սիրիայի հետ սերտ հարաբերությունների հաստատումից: Մասնավորապես, 2005թ. գարնանը ԱՄՆ իշխանությունները փորձեցին հասնել Թուրքիայի նախագահ Ահմեդ Սեզերի՝ Դամասկոս կատարելիք այցելության չեղյալ հայտարարմանը, սակայն Թուրքիայի նախագահը, որն այս հարցում վայելում էր նաև վարչապետ Էրդողանի լիակատար աջակցությունը, տեղի չտվեց ամերիկյան հորդորներին:<sup>62</sup>

Որոշակիորեն տարբերվում են նաև ԱՄՆ-ի և Թուրքիայի դիրքորոշումները պաղեստինա-իսրայելական հակամարտության և, մասնավորապես, Պաղեստինյան ինքնավարությունում զգալի ազդեցություն ունեցող ՀԱՄԱՍ շարժման նկատմամբ: Եթե ԱՄՆ-ն ՀԱՄԱՍ-ը համարում է ահաբեկչական կազմակերպություն, ապա 2006թ. հունվարին Պաղեստինյան ինքնավարությունում կայացած խորհրդարանական ընտրություններից (որոնցում հաղթանակ էր տարել ՀԱՄԱՍ-ը) ընդա-

մենը մի քանի շաբաթ անց Անկարա այցելեց և Էրդողանի հետ հանդիպեց ՀԱՄԱՍ-ի բարձրաստիճան պատվիրակությունը: Միաժամանակ Էրդողանի գլխավորած կառավարությունը սկսել է ժամանակ առ ժամանակ քննադատել Գազայի հատվածում և Արևմտյան ափում Իսրայելի վարած քաղաքականությունը:

Այնուամենայնիվ, ոչ մի խնդիր այնպիսի բացասական ազդեցություն չի գործել թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա, ինչպես 2003թ. ամերիկյան ներխուժումն էր Իրաք, դրան հաջորդած իրադարձությունները և Թուրքիայի դիրքորոշումն այդ խնդրում: Ինչպես հայտնի է, ԱՄՆ-ն ակտիվորեն փորձում էր ստանալ Թուրքիայի համաձայնությունն այդ երկրի տարածքից Իրաք ներխուժման հարցում: Սակայն շուրջ վեց ամիս տևած բանակցություններից հետո 2003թ. մարտի 1-ին Թուրքիայի խորհրդարանը մերժեց ամերիկյան գորբերին Թուրքիայի տարածքից Իրաք ներխուժման թույլատվության տրամադրման ամերիկյան կողմի առաջարկը:<sup>63</sup>

Ամերիկյան պաշտոնական շրջանակների կարծիքով, այս որոշումը ոչ միայն հարկադրեց փոխել պատերազմի նախնական ծրագրերը, այլև նպաստեց հետպատերազմյան Իրաքում իրավիճակի բարդացմանը: Պատահական չէ, որ ԱՄՆ պաշտպանության նախկին նախարար Դոնալդ Ռամսֆելդը 2005թ. մարտին (երբ նա դեռ զբաղեցնում էր այդ պաշտոնը) հայտարարեց, որ Իրաքում ստեղծված անկայուն իրավիճակի պատճառներից մեկն էլ այն հանգամանք է, որ Թուրքիան չթույլատրեց ամերիկյան չորրորդ հետևակային դիվիզիային Թուրքիայի տարածքով հյուսիսից մտնել Իրաք՝ երկրորդ ճակատ բացելով Սադդամ Հուսեյնի դեմ:<sup>64</sup>

Իրաքի խնդրում թուրք-ամերիկյան հակասությունները չեն սահմանափակվում միայն Թուրքիայի տարածքը որպես Իրաք ներխուժման պլանցողարմ տրամադրելու պաշտոնական Վաշինգտոնի խնդրանքի մերժմամբ: Թուրքիայում լուրջ կասկածներ կան Հյուսիսային Իրաքի

<sup>61</sup> Vladimir Socor, *Turkey Offers Rout to Europe For Iranian and Turkmen Gaz*, Eurasia Daily Monitor, July 19, 2007, see at

[http://www.jamestown.org/edm/article.php?article\\_id=2372301](http://www.jamestown.org/edm/article.php?article_id=2372301)

<sup>62</sup> Stephan F. Larabee, *ibid.*, <http://www.foreignaffairs.org/20070701facssay86408/f-larabee-jarrabec/turkey-rediscovers-the-middle-east.html>

<sup>63</sup> Fiona Hill and Omer Taspinar, "Turkey and Russia: Axis of the Excluded", p. 82.

<sup>64</sup> See <http://www.cnn.com/2005/WORLD/meast/03/20/iraq.anniversary/>

քրդարևակ շրջաններում ԱՄՆ վարած քաղաքականության առնչությամբ: Թուրքական որոշ շրջանակներ գտնում են, որ ԱՄՆ-ն անուղակիորեն աջակցում է այդ տարածքում անկախ քրդական պետության ստեղծմանը, ինչը միանշանակ լուրջ խթան կհանդիսանա Թուրքիայի քրդաբնակ շրջաններում ընթացող անջատողական շարժման ակտիվացման համար: Չնայած ԱՄՆ իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ չեն ցանկանում հասնել Իրաքի մասնատմանը և անկախ քրդական պետության ստեղծմանը, այդ հավաստիացումները միանշանակորեն չեն ընդունվում թուրքական քաղաքական շրջանակների կողմից:

2003 թ. հուլիսին Հյուսիսային Իրաքում ԱՄՆ զինված ուժերի կողմից թուրքական հատուկ ծառայությունների 11 գործակալների ձերբակալումն ու հրապարակային նվաստացումը (միջազգային տարբեր հեռուստաընկերություններ ցուցադրեցին գլխներին պարկեր հագրած թուրք զինվորներին), բնականաբար, չէր կարող նպաստել թուրքամերիկյան հարաբերությունների բարելավմանը:<sup>65</sup>

Հյուսիսային Իրաքում ԱՄՆ իրական նպատակների առնչությամբ թուրքական կողմի կասկածներն էլ ավելի ուժեղացան այն բանից հետո, երբ 2007թ. թուրքական ուժերը Քրդական աշխատավորական կուսակցության մարտիկներից առգրավեցին ամերիկյան արտադրության զենքեր, այդ թվում M-16 ինքնաձիգներ: Ամերիկյան կողմի պնդումների համաձայն, Քրդական աշխատավորական կուսակցության գրոհայիններից խլված ամերիկյան զենքերը նախատեսված են եղել իրաքյան բանակի համար, սակայն Իրաքում դրանց մի մասը ապօրինաբար տրվել է քրդերին իրաքյան անվտանգության ծառայության որոշ աշխատակիցների կողմից: Այնուամենայնիվ, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարեց, որ այս

<sup>65</sup> Andrew McGregor, *Massoud Barzani Conducting Dangerous Games in Northern Iraq*, Terrorism Focus, Vol IV, Issue 23, July 17, 2007, p. 4.

խնդրի կապակցությամբ ամերիկյան կողմի բացատրություններն այնքան էլ համոզիչ չեն:<sup>66</sup>

Իրաքի խնդրի հետ կապված Թուրքիային անհանգստացնում է նաև Քիրքուքի ապագա ճակատագիրը և այդ հարցում ԱՄՆ վարած քաղաքականությունը: Շուրջ մեկ միլիոն բնակչություն ունեցող քաղաք (այստեղ բնակվում են քրդեր, արաբներ, թուրքմեններ և սուրիներ) քաղաքի մերձակայքում են գտնվում Իրաքի առավել խոշոր նավթահանքերը, ինչն էլ ավելի է մեծացնում քաղաքի հետագա ճակատագրի շուրջ առկա լարվածությունը:

Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության կառավարությունը ցանկանում է Քիրքուքը ընդգրկել իր սահմաններում, ինչը լուրջ անհանգստություն է առաջ բերում թուրքական պաշտոնական շրջանակներում, որոնք գտնում են, որ նավթային հարուստ շրջանների հայտնվելը քրդական ինքնավարության սահմաններում լուրջ խթան կհանդիսանա հետագայում Հյուսիսային Իրաքի տարածքում անկախ քրդական պետության ստեղծման համար: Թուրքական իշխանությունները պնդում են, որ քրդական կողմը թուրքմեններին Քիրքուքից և նրա մերձակայքից վտարելու միտումնավոր քաղաքականություն է իրականացնում՝ քաղաքի էթնիկ կազմը փոփոխելու նպատակով: Պաշտոնական Անկարան ամերիկյան կողմից պահանջում է ճնշում գործադրել Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության կառավարության վրա՝ նմանատիպ քաղաքականությունը դադարեցնելու նպատակով:

Միևնույն ժամանակ ամերիկյան իշխանությունները հակված չլին կտրուկ քայլեր ձեռնարկել Հյուսիսային Իրաքում Քրդական աշխատավորական կուսակցության գրոհայինների գործունեությունը կասեցնելու կամ էլ Քիրքուքի շուրջ ստեղծված իրավիճակը կտրուկ փոփոխելու համար: Իրաքյան պատերազմում առաջին քրդերն ամերիկացիների, քերես, առավել հավատարիմ դաշնակիցներն են, և պաշ-

<sup>66</sup> Andrew McGregor, *PKK Arms Scandal Fuels Turkish Suspicions*, Terrorism Focus, Vol IV, Issue 27, August 14, 2007, p. 4

տոնական Վաշինգտոնը չէր ցանկանում էլ ավելի թուլացնել իր դիրքերն Իրաքում՝ վատթարացնելով հարաբերությունները դաշնակիցներին հետ: Բացի այդ, Հյուսիսային Իրաքի քրդաբնակ շրջաններն աչքի են ընկնում համեմատական կայունությամբ և ամերիկացիները չէին ցանկանում անկայունության ևս մեկ օջախ ավելացնել Իրաքում:

*2.2 Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը ԱՄՆ-ում և ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը 2003-2007 թթ.*

2003-2007 թթ. թուրք-ամերիկյան հարաբերություններում շարունակում էր որոշակի դերակատարություն ունենալ ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության հնարավոր ճանաչման խնդիրը: Ինչպես նախորդ ժամանակաշրջանում, այն ԱՄՆ վարչակազմի կողմից հիմնականում օգտագործվում էր Թուրքիայի նկատմամբ որոշակի խնդիրներում ճնշումներ գործադրելու նպատակով:

2003 թ. հուլիսի 22-ից 26-ը պաշտոնական այցով Վաշինգտոն ժամանեց Թուրքիայի արտգործնախարար Աբդուլլահ Գյուլը: Նշենք, որ այդ շրջանում երկկողմ հարաբերությունները բավականաչափ լարված էին, կապված առաջին հերթին իրաքյան իրադարձությունների հետ: Գյուլը հանդիպումներ ունեցավ փոխնախագահ Դիբ Չեյնիի, պետքարտուղար Քոլին Փաուելի և Ջորջ Բուշի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Քոնդոլիզա Ռայսի հետ: Նշված հանդիպումների ընթացքում կողմերը քննարկեցին նաև ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության հնարավոր ճանաչման խնդիրը: Այս անգամ ևս այդ խնդրում Թուրքիայի համար անցանկալի զարգացումները կանխելու դիմաց ԱՄՆ վարչակազմը Թուրքիային առաջարկեց քայլեր ձեռնարկել Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման ուղղությամբ: Ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաները ևս մեկ անգամ հայտարարեցին, որ ԱՄՆ կողմից ցեղասպանության ճանաչման խնդիրը օրակարգից չի հանվել: Նրանք նշեցին, որ միայն հայ-թուրքական հարաբերություններում նկատվող առաջընթացը կարող է

մեղմել այդ խնդրում առկա ճնշումը և շեշտեցին, որ հայ-թուրքական սահմանի բացումը, իրենց կարծիքով, բխում է նաև Թուրքիայի ազգային շահերից: Հետաքրքիր է, որ Գյուլը մտահոգություն է հայտնել, որ սահմանի բացումը կարող է նպաստել Հայաստանի կողմից Թուրքիային տարածքային պահանջների ներկայացմանը: Միաժամանակ Թուրքիայի արտգործնախարարը հայտարարել է, որ Թուրքիան ցանկանում է վերականգնել հարաբերությունները Հայաստանի հետ, սակայն նշել է, որ Թուրքիան որևէ գործողություն չի իրականացնի պարտադրանքի ներքո: Քանի դեռ Կոնգրեսում քննարկվում են Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևեր, Թուրքիան Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկի:<sup>67</sup>

Ինչպես տեսնում ենք, եթե ԱՄՆ-ը Հայոց ցեղասպանության ճանաչումն օգտագործում էր Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու համար Թուրքիայի նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով, թուրքական իշխանություններն իրենց հերթին այդ ուղղությամբ որևէ քայլերի իրականացումը կապում էին մմանատիպ բանաձևերի քննարկումը դադարեցնելու հետ:

Թուրքական կողմի պահանջին ընդառաջելով՝ ԱՄՆ գործադիր իշխանության ներկայացուցչները համապատասխան քայլեր ձեռնարկեցին ԱՄՆ-ի կողմից 1948 ՄԱԿ-ի կողմից ընդունված «Յեղասպանության մասին» կոնվենցիայի վավերացման 15-րդ տարեկիցին նվիրված թիվ 193 բանաձևի ընդունումը կանխելու ուղղությամբ, որտեղ որպես ցեղասպանության օրինակ էր հիշատակվում նաև Հայոց ցեղասպանությունը:

Բանաձևը Ներկայացուցիչների պալատ էր ներկայացվել 2003 թ. ապրիլի 10-ին Ջորջ Ռադանովիչի, Ադամ Շիֆի, Ֆրենք Փալոնի և Ջո Նոլենբերգի կողմից: Այն մայիսի 21-ին միաձայն հաստատվել էր Ներկայացուցիչների պալատի իրավական հարցերով հանձնաժողովի

<sup>67</sup> David Phillips, *ibid.* p 129-131.

կողմից: Հունիսի 10-ին նմանատիպ մի բանաձև (թիվ 164) ներկայացվել էր նաև Սենատի քննարկմանը:<sup>68</sup>

Նշենք, որ դեռ մինչև Գյուլի Վաշինգտոն կատարված այցելությունը փոխնախագահ Չեյնին անձամբ հեռախոսազրույց էր ունեցել Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դենիս Հասթերթի հետ, որը հավաստիացրել էր, որ թիվ 193 բանաձևը չի ներառվի Ներկայացուցիչների պալատի օրակարգում: Սենատում մեծամասնության ղեկավար Բիլ Ֆրիստը և Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ռիչարդ Լուգարը ևս հավաստիացրել էին, որ քայլեր կձեռնարկեն Սենատ ներկայացված բանաձևը տապալելու ուղղությամբ:<sup>69</sup> Սենատ ներկայացված բանաձևը նախատեսվում էր քվեարկության ղնել հուլիսի 10-ին ԱՄՆ պետքարտուղարության բյուջեի նախագծի հետ միասին, սակայն վերջին պահին այն հանվեց քվեարկությունից:<sup>70</sup>

Մակայն ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում առկա այլ խնդիրները շուտով ԱՄՆ-ի համար հետին պլան մղեցին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցը: Առաջին հերթին դա պայմանավորված էր Իրաքի խնդրով: Ամերիկյան ներխուժումից հետո աստիճանաբար վատթարացող իրադրության պայմաններում թուրքական իշխանությունները վտահ էին, որ ԱՄՆ-ը հարկադրված է դիմելու իրենց օգնությանը, իսկ դա նշանակում է, որ թուլանալու է ճնշումը Հայոց ցեղասպանության ճանաչման, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրում: Նախագահ Բուշի վարչակազմը ստեղծված պայմաններում իր առաջնահերթություններից մեկն էր համարում Իրաքում անվտանգության ապահովման ջանքերի միջազգայնացումը, և այստեղ մեծ տեղ էր հատկացվում Թուրքիային: Գյուլի այցելության ընթացքում ամերիկյան իշխանու-

<sup>68</sup> BROAD-BASED COALITION EXPANDS SUPPORT FOR CONGRESSIONAL GENOCIDE RESOLUTION,

[http://www.anca.org/press\\_releases/press\\_releases.php?prid=353](http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=353)

<sup>69</sup> David Phillips, *ibid.* pp 129-131.

<sup>70</sup> Ազգ. 11-ը հուլիս, 2003 <http://www.azg.am/AM/2003071101>.

թյունները պաշտոնապես դիմեցին Թուրքիային՝ Իրաքի կայունացման ուժերի կազմում Իրաք թուրքական ուժեր ուղարկելու առաջարկով:<sup>71</sup>

2003 թ. հոկտեմբերի 7-ին Թուրքիայի խորհրդարանը ձայների մեծամասնությամբ որոշեց թույլատրել թուրքական զորքերի տեղակայումը Իրաք: Ստեղծված պայմաններում նախագահ Բուշի վարչակազմի համար հայ-թուրքական սահմանի բացումը և երկկողմ հարաբերությունների կարգավորումը արդեն կորցրել էր իր առաջնային նշանակությունը:

Այնուամենայնիվ, Կոնգրեսում շարունակվում էին Հայոց ցեղասպանության ճանաչման և Հայաստանի նկատմամբ Թուրքիայի վախճված քաղաքականության շուրջ քննարկումները: 2004 թ. հուլիսին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում քննարկվեց «2005 թ. արտաքին օժանդակության ծրագիրը»: Դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Ադամ Շիֆը առաջարկել էր ծրագրում փոփոխություն մտցնել, ըստ որի Թուրքիային հնարավորություն չի տրվելու օգտագործել ամերիկյան ֆինանսական օժանդակությունը Կոնգրեսում հակահայկական քարոզչություն իրականացնելու համար: Մակայն հանրապետական մեծամասնությունը դեմ արտահայտվեց այդ ուղղմանը: ԱՄՆ Պետդեպարտամենտի խոսնակ Ռիչարդ Բաուչերը հայտարարեց, որ նախագահ Ջորջ Բուշի վարչակազմը ևս դեմ է այդ ուղղմանը, քանի որ այն հակասում է Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների նորմալացմանն ուղղված ԱՄՆ կառավարության ջանքերին:<sup>72</sup>

2005թ. ապրիլին ԱՀՀ-ի և շուրջ 20 այլ ամերիկահայ կազմակերպությունների ջանքերով Կոնգրեսի շենքում կազմակերպվեց հիշատակի հատուկ արարողություն, որին ներկա էին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի և Սենատի բազմաթիվ անդամներ, ցեղասպանու-

<sup>71</sup> FOREIGN MINISTER ABDULLAH GÜL'S VISIT TO THE US, <http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/ta%C5%9Ffinan-newspot/2003/julyaug/n1.htm>

<sup>72</sup> Անանյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը, էջ 66:

յան տարիներին Օսմանյան Կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի ժառանգները: Միջոցառմանը մասնակցել են նաև ԱՄՆ-ում Հայաստանի դեսպան Թաթուլ Մարգարյանը և ԱՄՆ-ում Լեռնային Գարաբաղի Հանրապետության ներկայացուցիչ Վարդան Բարսեղյանը: 2005թ. ապրիլի 24-ի նախօրեին 200 կոնգրեսականներ նամակով դիմել էին ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշին՝ պահանջելով, որ պետի վերջինս ապրիլի 24-ի իր հերթական ուղերձում ընդունի՝ ցեղասպանության իրականացման փաստը:

ԱՀՀ-ի և ԱՀԱԿ-ի ակտիվ աջակցությամբ Ներկայացուցիչների պալատ ներկայացվեց կոնգրեսականներ Ջորջ Ռադանովիչի, Ջո Նոլենբերգի, Ֆրենք Փալոնի և Ադամ Շիֆի հեղինակած Հայոց ցեղասպանությունը ճանաչող թիվ 316 բանաձևը, որը 2005թ. սեպտեմբերի 15-ին ձայների բացարձակ առավելությամբ հավանության արժանացավ Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում: Այն կոչ էր անում ԱՄՆ նախագահին ապահովել Հայոց ցեղասպանության փաստի արտացոլումը երկրի արտաքին քաղաքականության իրականացման գործընթացում: Նշենք, որ այս անգամ ևս թուրքական իշխանությունները ԱՄՆ-ի թուրքական լոբբիստական կազմակերպությունների հետ համատեղ ակտիվ գործունեություն էին ծավալել բանաձևի ընդունումը կանխելու համար: Զվեարկությունից մի քանի օր առաջ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանի ջանքերով Ներկայացուցիչների պալատում ցեղասպանությունը հերքող չորս էջանոց փաստաթուղթ էր տարածվել: Թուրքական լոբբիստական առավել ազդեցիկ կազմակերպություններից մեկի՝ Ամերիկայի թուրքական խորհրդի նախագահ, Ազգային անվտանգության գծով ԱՄՆ նախագահի նախկին օգնական Բրենտ Սքոտթոֆթը պալատի խոսնակ Դենիս Հասթերթին սեպտեմբերի 12-ին ուղղված նամակում գգուշացրել էր, որ Ներկայացուցիչների պալատի լիազումար նիստի ընթացքում բանաձևի քննարկումը լուրջ հարված կհասցնի թուրք-ամերիկյան հարաբերություններին: Նա բանաձևի հեղինակներին մեղադ-

րել էր Թուրքիան Արևմուտքից հեռացնելու ցանկության մեջ:<sup>73</sup> Նշենք, որ այս բանաձևը ևս չներկայացվեց Ներկայացուցիչների պալատի քննարկմանը:

2005թ. ընթացքում հայկական լոբբիստական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում էր նաև Կարս-Ախալքալակ-Թրիվիսի-Բաբու երկաթգծի կառուցման նախագիծը, որն առաջին հերթին միաված է տարածաշրջանում Հայաստանի մեկուսացվածության խորացմանը: Նրանց ակտիվ աջակցությամբ ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահներ Ջո Նոլենբերգը և Ֆրենք Փալոնը, ինչպես նաև հանձնախմբի անդամ Ջորջ Ռադանովիչը 2005թ. հուլիսի 20-ին Ներկայացուցիչների պալատ էին ներկայացրել «Հարավային Կոնգրեսի ինտեգրման և բաց երկաթուղիների» թիվ 3361 օրինագիծը, որը արգելում էր ԱՄՆ կողմից օգնության տրամադրումը Ադրբեջանը, Վրաստանը և Թուրքիան միմյանց կապող և Հայաստանը շրջանցող երկաթգծի կառուցմանը:<sup>74</sup> 2006թ. մարտի 28-ին սենատորներ Ռիկ Սանտորոնը և Ռոբերտ Մենենդեյսը թիվ 2461 նմանատիպ օրինագիծ ներկայացրին ԱՄՆ Սենատի քննարկմանը:<sup>75</sup>

ԱՄՆ Թուրքիա հարաբերություններում Հայոց ցեղասպանության գործոնի ազդեցության վկայությունն էր 2007թ. աշնանը Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի քննարկումը: Դեռևս 2007 թ. հունվարին Կոնգրեսականներ Ադամ Շիֆը, Ջորջ Ռադանովիչը և Կոնգրեսի հայկական հանձնախմբի համանախագահներ Ֆրենք Փալոնն ու Ջո Նոլենբերգը Ներկայացուցիչների պալատին ներկայացրին թիվ 106 բանաձևը:<sup>76</sup> Այն լուրջ հիմնավորումներով հաստատում էր Հայոց ցեղասպանության փաստը, առավել լիարժեք ներկայացնում դրա ժամանակագրական սահմանները՝ 1915-ից մինչև 1923-ը: Հստակորեն

<sup>73</sup> House International Relations Committee Overwhelmingly Adopts Armenian Genocide Legislation, [http://www.anca.org/press\\_releases/press\\_releases.php?prid=813](http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=813).

<sup>74</sup> [http://www.anca.org/press\\_releases/press\\_releases.php?prid=793](http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=793)

<sup>75</sup> [http://www.anca.org/press\\_releases/press\\_releases.php?prid=927](http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=927)

<sup>76</sup> ARMENIAN GENOCIDE RESOLUTION INTRODUCED IN HOUSE OF REPRESENTATIVES, [http://www.anca.org/press\\_releases/press\\_releases.php?prid=1067](http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=1067)

նշում էր զոհերի թվաքանակը «2 միլիոն տեղահանված, որոնցից 1,5 միլիոնը բնաջնջված»: Ընդգծվում էր քաղաքական եւ իրավական տեսանկյունից չափազանց կարևոր մի հանգամանք՝ հայերը ոչնչացվել են իրենց պատմական հայրենիքի տարածքում, որտեղ բնակվում էին ավելի քան երկու հազար հինգ հարյուր տարի:<sup>77</sup>

Ներկայացուցիչների պալատում բանաձևի ընդունման հավանականությունը մեծացել էր նաև այն պատճառով, որ 2006 թ. աշնանը տեղի ունեցած Կոնգրեսի ընտրությունների արդյունքում Ներկայացուցիչների պալատում մեծամասնություն էր ստացել Դեմոկրատական կուսակցությունը: Պալատի խոսնակ Նենսի Փելոսին ևս հանդես էր գալիս Հայոց ցեղասպանության մասին բանաձևի ընդունման օգտին: Բանաձևը Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում պետք է քննարկվեր դեռևս 2007 թ. մարտին, սակայն Ջորջ Բուշի վարչակազմին հաջողվեց հետաձգել այդ քննարկումը: 2007 թ. մարտի 7-ին բանաձևի քննարկմանը դեմ ուղղված մամակով Նենսի Փելոսիին դիմեցին ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը և Պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը:<sup>78</sup>

Այնուամենայնիվ, չնայած ԱՄՆ վարչակազմի ձեռնարկած ջանքերին, 2007 հոկտեմբերի 10-ին 106-րդ բանաձևը քննարկման դրվեց Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում: Ընդունվելու դեպքում այն ներկայացվելու էր Ներկայացուցիչների պալատի հաստատմանը, որտեղ 226 կոնգրեսականներ իրենց աջակցությունն էին հայտնել բանաձևին: Նշենք, որ Կոնգրեսի ստորին պալատի ընդունումից հետո բանաձևը չէր ներկայացվելու Վերին պալատի՝ Սենատի հաստատմանը, քանի որ չունեի օրենքի ուժ եւ պարտադիր չէր կառավարության համար:<sup>79</sup>

<sup>77</sup> Ազգ. 10-ը հոկտեմբեր, 2007 <http://www.azg.am/AM/2007101003>.

<sup>78</sup> The New York Times, Bush urges Congress to reject Armenian Genocide resolution, 10.10.2007, [http://www.nytimes.com/2007/10/10/world/europe/10iht-10turkey.7834745.html?\\_r=1&sc=1&sq=Armenian%20genocide%20Resolution&st=csc](http://www.nytimes.com/2007/10/10/world/europe/10iht-10turkey.7834745.html?_r=1&sc=1&sq=Armenian%20genocide%20Resolution&st=csc).

<sup>79</sup> Ազգ. 10 հոկտեմբեր, 2007, <http://www.azg.am/AM/2007101001>

Թուրքիայի իշխանությունները ակտիվ գործունեություն էին ծավալել բանաձևի ընդունումը կանխելու ուղղությամբ: Հոկտեմբերի 5-ին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հեռախոսով զգուշացրել էր ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշին, որ Կոնգրեսում բանաձևի ընդունումը լուրջ վնաս կհասցնի թուրք-ամերիկյան ռազմավարական գործակցությանը:

Հոկտեմբերի 8-ին Վաշինգտոն էր գործուղվել Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի պատվիրակությունը, որի ղեկավար, «Արդարություն եւ զարգացում» կուսակցության փոխնախագահ Էգեմեն Բադըշը հայտարարել էր, որ ամեն ինչ անելու են բանաձևը տապալելու համար: Նա միաժամանակ ակնարկել էր Իրաքում տեղակայված ամերիկյան զորքերին Թուրքիայի տարածքից, մասնավորապես, Ինջիրլիքի ռազմակայանից կատարվող տեխնիկական մատակարարումները դադարեցնելու հնարավորության մասին:<sup>80</sup>

Թուրքիայի խորհրդարանի նախագահ Քոկսալ Թոփթանը հոկտեմբերի 7-ին Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիին ուղղված մամակում նշել էր, որ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից բանաձևի ընդունումը բացասական ազդեցություն կթողնի երկկողմ հարաբերությունների վրա, որոնց վերականգնման համար կարող են տասնամյակներ պահանջվել:<sup>81</sup>

Հոկտեմբերի 10-ին նախատեսված քվեարկությունից մեկ օր առաջ թուրքական պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամների հետ՝ նրանց կոչ անելով չընդունել ցեղասպանությունը ճանաչող բանաձևը՝ շեշտելով, որ քվեարկության յրական արդյունքը

<sup>80</sup> <sup>80</sup> Ազգ. 10 հոկտեմբեր, 2007, <http://www.azg.am/AM/2007101001>

<sup>81</sup> <http://www.azatutyun.am/armeniareport/report/ar/2007/10/8AF4903E-D223-4BDC8C6C994E1AB2053.asp>

զգալի բացասական ազդեցություն կունենա թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա:<sup>82</sup>

ԱՄՆ գործադիր իշխանությունները մի շարք քայլեր ձեռնարկեցին՝ բանաձևի ընդունումը թույլ չտալու համար: Հոկտեմբերի 10-ի քվեարկությունից մի քանի ժամ առաջ նախագահ Ջորջ Բուշը հանդես եկավ հաստիք հայտարարությամբ: Նշելով, որ խորապես ցավում է 1915 թ. սկսված հայ ժողովրդի ողբերգական տառապանքների համար, նախագահը շեշտում էր, որ բանաձևի ընդունումը ճիշտ պատասխան չէ այդ զանգվածային սպանություններին, և այն լուրջ վնաս կհասցնի ՆԱՏՕ-ի շրջանակներում ԱՄՆ-ի կարևոր դաշնակցի հետ հարաբերություններին: Բանաձևի ընդունումը թույլ չտալու կոչով հանդես եկան նաև ԱՄՆ նախկին պետքարտուղարներ, ինչպես նաև Քոնդոլիզա Ռայսն ու Ռոբերտ Գեյթսը:<sup>83</sup>

Սակայն, չնայած թուրքական կողմի և Ջորջ Բուշի վարչակազմի ձեռնարկած բոլոր քայլերին, հոկտեմբերի 10-ին Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը ձայների 27 կողմ 21 դեմ հարաբերակցությամբ ընդունեց բանաձևը:<sup>84</sup> Նշենք, որ ի տարբերություն 2000 թ, այս անգամ ԱՄՆ հրեական լոբբին չէր խոչընդոտում բանաձևի ընդունմանը: Ավելին, Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, ծագումով հրեա Թոմ Լանթոսը, որը Հոլոքոսթը վերապրած միակ կոնգրեսականն էր և երկար տարիներ Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունման հակառակորդը, այս անգամ ակտիվորեն աջակցում էր բանաձևի ընդունմանը: Ակնհայտ է, որ բանաձևի ընդունումը հրեական լոբբին դիտարկում էր որպես Էրդոհանին ուղղված նախազգուշացում վերջինիս կողմից Իսրայելին ուղղված քննադատության համատեքստում:

<sup>82</sup> <http://www.azatutyun.am/armeniareport/report/ar/2007/10/9776203B-0A8C-4439-8AEC-CC8982DF3C96.asp>

<sup>83</sup> The New York Times, Bush urges Congress to reject Armenian Genocide resolution, 10.10.2007, [http://www.nytimes.com/2007/10/10/world/europe/10iht-10turkey.7834745.html?\\_r=1&scp=1&sq=Armenian%20genocide%20Resolution&st=csc](http://www.nytimes.com/2007/10/10/world/europe/10iht-10turkey.7834745.html?_r=1&scp=1&sq=Armenian%20genocide%20Resolution&st=csc).

<sup>84</sup> Ազգ, 12-ը հոկտեմբեր 2007, <http://www.azg.am/AM/2007101202>.

Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից բանաձևի ընդունումից հետո թուրքական կողմի արձագանքը բավականին կոշտ էր: Նախագահ Աբդուլլա Գյուլը անընդունելի էր որակել հանձնաժողովի կողմից ցեղասպանությունը ճանաչող բանաձևին հավանություն տալու փաստը: Նա նշել էր, որ այդ որոշումը արժեք չունի թուրք ժողովրդի համար և ամերիկյան կոնգրեսականներին մեղադրել կարևորագույն հարցերը ներքաղաքական խաղերին զոհարկելու մեջ:<sup>85</sup>

Վարչապետ Ռեջեփ Էրդոհանը հոկտեմբերի 12-ին հրապարակած հայտարարության մեջ նշել էր, որ արտաքին հարաբերությունների հանձնաժողովում բանաձևի հաստատումից հետո թուրք-ամերիկյան հարաբերությունները վտանգված են: Նա նաև կոչ էր արել Ջորջ Բուշի վարչակազմին ավելի մեծ ջանքեր գործադրել Ներկայացուցիչների պալատի կողմից բանաձևի ընդունումը կանխելու համար: Որպես բողոքի նշան Թուրքիան հետ կանչեց Վաշինգտոնում իր դեսպանին: Թուրքիայի Գլխավոր շտաբի պետ գեներալ Յաշար Բույուբանիքը հայտարարեց, որ Ներկայացուցիչների պալատի կողմից բանաձևի ընդունման դեպքում թուրք-ամերիկյան ռազմական հարաբերությունները այլևս երբեք նույնը չեն լինի: Թուրք-ամերիկյան հարաբերություններում ձևավորված լարվածությունը մեղմելու նպատակով հոկտեմբերի 13-ին Թուրքիա գործուղվեց պաշտպանության փոխնախարար Էրիկ Էդելմանը և պետքարտուղարի Եվրոպայի հարցերով օգնական Դենիել Ֆրիդը:<sup>86</sup>

Միաժամանակ Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձևի քննարկման շրջանակներում թուրքական իշխանությունները սկսեցին ակտիվորեն օգտագործել Հյուսիսային Իրաք թուրքական զորքերի ներխուժման խնդիրը՝ դա պատճառարանելով Զրդական աշ-

<sup>85</sup> <http://www.azatutyun.am/armeniareport/report/ar/2007/10/054AEB46-10C8-445D8AA0-F9F276508501.asp>

<sup>86</sup> The New York Times, 14 October 2007 U.S. House speaker vows debate on Armenian genocide resolution, <http://www.nytimes.com/2007/10/14/world/americas/14iht-turkey.4.7886937.html?scp=3&sq=Armenian%20genocide%20Resolution&st=csc>.

խատավորական կուսակցության դեմ պայքարի անհրաժեշտությամբ: Հոկտեմբերի 10-ի քվեարկությունից գրեթե անմիջապես հետո Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարեց, որ չնայած ամերիկյան կողմի անհամաձայնությանը, կառավարությունը մտադիր է դիմել խորհրդարանին՝ թուրքական զորքերին Իրաքի տարածքում ռազմական գործողություններ իրականացնելու թույլտվություն տրամադրելու առաջարկով:<sup>87</sup> Ամերիկյան իշխանությունները կտրուկ դեմ էին արտահայտվում այդ քայլին: Իրաքի հյուսիսը երկրի առավել կայուն հատվածներից մեկն էր, իսկ թուրքական ներխուժումը լրջորեն կապակայունացներ իրավիճակը ողջ տարածաշրջանում:

Հոկտեմբերի 17-ին թուրքական խորհրդարանը ձայների բացարձակ առավելությամբ հավանություն տվեց Հյուսիսային Իրաքում քուրդ ապստամբների դեմ ռազմական գործողություններ իրականացնելու նպատակով Իրաքի տարածք թուրքական զինուժ մտցնելու կառավարության առաջարկին: Ընդ որում, հարևան պետության տարածքում ռազմական գործողություն իրականացնելու թույլտվություն տրվում էր մեկ տարի ժամկետով:<sup>88</sup>

Հյուսիսային Իրաքում թուրքական զինված ուժերի կողմից լայնածավալ ռազմական գործողությունների իրականացման վտանգը լուրջ ազդեցություն ունեցավ 106 բանաձևի ընդունման գործընթացի վրա: Նախկինում բանաձևին աջակցություն հայտնած մի շարք կոնգրեսականներ հայտարարեցին դիրքորոշման փոփոխման մասին:

Հոկտեմբերի 17-ին Ներկայացուցիչների պալատի նախագահ Նենսի Փելոսին հայտարարեց, որ ամենայն հավանականությամբ Պալատի լիագումար նիստում թիվ 106 բանաձևի քվեարկությունը կհետաձգվի: Գեմոկրատական կուսակցության մի շարք առաջատար ներկայացուցիչներ ևս դիմեցին Փելոսին՝ խնդրելով հետաձգել բանաձևի քվեարկությունը՝ հայտարարելով, որ ստեղծված պայմաններ

<sup>87</sup> The Times, 12 October 2007, Turkish ambassador recalled from US amid fury at genocide claims, <http://www.timesonline.co.uk/tol/news/world/asia/article2636523.ece>.

<sup>88</sup> The Times, October 17, 2007, Turkish MPs approve offensive against Kurds, [http://www.timesonline.co.uk/tol/news/world/us\\_and\\_americas/article2676569.ece](http://www.timesonline.co.uk/tol/news/world/us_and_americas/article2676569.ece).

րում բանաձևի ընդունման հավանականությունը բավականաչափ փոքր է:<sup>89</sup>

Հոկտեմբերի 21-ին բրիտանական «Թայմս» պարբերականին տված հարցազրույցում Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարեց, որ ԱՄՆ Կոնգրեսի կողմից Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունման դեպքում ԱՄՆ-ը շատ կարևոր ընկեր կարող է կորցնել:<sup>90</sup>

2007 թ. հոկտեմբերի 25-ին բանաձևի քվեարկությունը հետաձգելու խնդրանքով Նենսի Փելոսին դիմեցին թիվ 106 բանաձևի հեղինակներ Ադամ Շիֆը ու Կոնգրեսի հայկական հանձնախմբի համանախագահ Ֆրենք Փայոնը, ինչպես նաև բանաձևի ակտիվ աջակիցներ Բրեդ Շերմանն ու Աննա Էշուն՝ խնդրելով առայժմ չսահմանել բանաձևի քվեարկության ժամկետ: Նամակում կոնգրեսականները, մասնավորապես, նշել են. «Մենք համոզված ենք, որ մեր գործընկերների մեծամասնությունը ցանկանում է Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևին հավանություն տալ լիագումար նիստում, և նրանք դա կանեն ավելի բարենպաստ ժամանակ»:<sup>91</sup>

Ի վերջո, թուրքական իշխանություններին հաջողվեց այս անգամ ևս տապալել Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունումը ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի կողմից, որպես հաղթարար օգտագործելով Հյուսիսային Իրաք ռազմական ներխուժման հնարավորությունը:

<sup>89</sup> The New York Times, 18 October, 2007. House Speaker now Unsure if Armenian Genocide Motion will reach a Vote, <http://query.nytimes.com/gst/fullpage.html?res=9D03E1D91E31F93BA25753C1A9619C8B63&sec=&spon=&scp=2&sq=Armenian%20genocide%20Resolution&st=cse>.

<sup>90</sup> The Times, October 21, 2007, The Prime Minister of Turkey discusses the Kurdish separatist crisis with Martin Fletcher and Suna Erdem, <http://www.timesonline.co.uk/tol/news/world/europe/article2707933.ece>.

<sup>91</sup> Ազգ, 27-ը հոկտեմբեր 2007, <http://www.azg.am/AM/2007102704>.

### Վերջաբան

1991-2007 թթ. Հայոց ցեղասպանության գործոնը որոշակի դերակատարություն է ունեցել ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում, առաջին հերթին կապված ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության և առաջնահերթությունների հետ: Այն հիմնականում ամերիկյան տարբեր վարչակազմերի կողմից օգտագործվել է Թուրքիայի վրա տարբեր խնդիրներում, այդ թվում Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցում ճնշումներ գործադրելու նպատակով: Անհրաժեշտ է նշել, որ նշված ժամանակահատվածում վերոհիշյալ գործոնը թուրք-ամերիկյան հարաբերություններում վճռորոշ դերակատարություն չի ստանձնել՝ իր կարևորությամբ զիջելով մի շարք այլ գործոնների: ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրն օգտագործվել է նաև ԱՄՆ ներքաղաքական կյանքում ԱՄՆ հայ համայնքի համակրանքը շահելու նպատակով:

ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը կշարունակի որոշակի դերակատարություն ունենալ թուրք-ամերիկյան հարաբերություններում նաև ԱՄՆ նորընտիր նախագահ Բարաք Օբամայի վարչակազմի օրոք, ընդ որում, այս շրջանում ևս այն ամենակարևորների թվին չի պատկանում: ԱՄՆ նոր վարչակազմի համար Թուրքիայի հետ կապված գերակայությունների թվում են թուրքական կողմի աջակցությունը Իրաքում և Աֆղանստանում ԱՄՆ քաղաքականության իրականացմանը, թուրք-իրանական հարաբերությունների խնդիրը, Թուրքիայի հնարավոր միջնորդական ջանքերը արաբա-խարայեական հակամարտության կարգավորման խնդրում: ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում զգալի կարևորություն ունի Աֆղանստանի խնդիրը, հատկապես Աֆղանստան 30.000 հավելյալ ամերիկյան զինվորներ ուղարկելու Օբամայի որոշման և մինչև 2014 թ. ավարտը Աֆղանստանի ողջ տարածքում անվտանգության ապահովումը տեղի ուժերին հանձնելու մասին 2010 թ. նոյեմբերին ՆԱՏՕ-ի

Լիաբառնում տեղի ունեցած գազաթնաժողովում ընդունված հռչակագրի համատեքստում:

Թուրքիան կարևոր է դեր է խաղում նաև Ռուսաստանը շրջանցող նոր նախամուղերի և գազամուղերի կառուցման և շահագործման խնդրում մասնավորապես, «Նաբուկկո» ծրագրում, որը նախատեսում է գազամուղի կառուցում Թուրքիայից Ավստրիա՝ Բուլղարիայի, Ռումինիայի և Հունգարիայի տարածքով: Այդ ծրագրերի իրականացումը հնարավորություն կտա դիվերսիֆիկացնել Եվրամիության կողմից սպառվող նավթի և գազի աղբյուրները, կասպյան ավազանի էներգետիկ ռեսուրսները կապել եվրոպական շուկաների հետ և որոշ չափով նվազեցնել Եվրամիության երկրների՝ Ռուսաստանից ունեցած էներգետիկ կախվածությունը, հանգամանք, որը վերջին տարիների զարգացումները հաշվի առնելով, հույժ կարևոր է ինչպես բուն Եվրամիության, այնպես էլ ԱՄՆ համար:

ԱՄՆ-ի համար իր նշանակությունը պահպանում է նաև Թուրքիայի տարածքում տեղակայված ամերիկյան Ինջիրլիկ ռազմակայանը: Ադանայից ընդամենը 10 կմ հեռավորության վրա գտնվող ռազմակայանը 1955թ. իր բացման օրվանից կարևոր դերակատարում է ունեցել ինչպես Սառը պատերազմի տարիներին, այնպես էլ Իրաքյան երկու պատերազմների և Աֆղանստանում ընթացող ռազմական գործողությունների ժամանակ: Նշենք, որ ԱՄՆ-ն չունի ռազմակայանը օգտագործելու երկարաժամկետ թույլտվություն և պարբերաբար հարկադրված է Թուրքիայի հետ քննարկել ռազմակայանի օգտագործման թույլտվության երկարացման խնդիրը, հանգամանք, որը բավականին կարևոր լծակ է թուրքական իշխանությունների ձեռքում:

Թուրքիան ևս շահագրգռված է ԱՄՆ-ի հետ դաշնակցային հարաբերությունների պահպանմամբ: Գրանք կարևոր դեր են խաղում Թուրքիայի համար ռազմավարական առումով սեփական անվտանգության ապահովման խնդրում:

Թուրք-ամերիկյան բարենպաստ հարաբերությունները կարևոր են պաշտոնական Անկարայի համար նաև Իրաքում տեղի ունեցող գոր-

ծրնրացների նկատմամբ որոշակի ազդեցություն ունենալու տեսանկյունից: Ակնհայտ է, որ առաջիկա տարիների ընթացքում ԱՄՆ-ը պահպանելու է իր ազդեցությունն Իրաքում և լուրջ դերակատարություն է ունենալու այնտեղ սպասվող զարգացումներում: Իրաքի ապագան և առաջին հերթին Հյուսիսային Իրաքում քրդական հնարավոր անկախ պետության ստեղծումը Թուրքիայի ազգային անվտանգությանն սպառնացող լրջագույն մարտահրավերներից մեկն է, և այս հարցում ԱՄՆ դիրքորոշումը չափազանց կարևոր է Թուրքիայի համար: Թուրքամերիկյան բարենպաստ հարաբերություններն էականորեն կմեծացնեն Անկարայի հնարավորությունները՝ հարկ եղած դեպքում Իրաքում ԱՄՆ քաղաքականության նկատմամբ որոշակի ազդեցության գործադրման տեսանկյունից:

Օրամայի վարչակազմի օրոք թուրք-ամերիկյան հարաբերություններում Հայոց ցեղասպանության գործոնը զգալիորեն առնչվում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրում ԱՄՆ վարած քաղաքականության հետ: Մինչ նախագահի պաշտոնը զբաղեցնելը Օրաման բազմիցս հրապարակայնորեն ճանաչել է Հայոց ցեղասպանության փաստը, ինչը հավելյալ նրբերանգներ է հաղորդում այս գործընթացին: Միանգամայն բնական է, որ ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը բարձրացվեց 2009 թ. ապրիլին Օրամայի՝ Թուրքիա կատարած այցելության ընթացքում:

ԱՄՆ-ի նոր վարչակազմն իր անվերապահ աջակցությունն է հայտնել 2008 թ. աշնանը մեկնարկած հայ-թուրքական բանակցություններին և 2009 թ. հոկտեմբերի 10-ին Յյուրիխում ստորագրված արձանագրություններին՝ շեշտելով ողջամիտ ժամկետներում դրանց վավերացման անհրաժեշտությունը: Անգամ թուրքական իշխանությունների կողմից վավերացման գործընթացի փաստացի տասպալումից հետո էլ ամերիկյան իշխանությունները շարունակում են ջանքեր գործադրել արձանագրությունները «կենդանի պահելու» ուղղությամբ՝ հորդորելով կողմերին հետ չվերցնել արձանագրությունների տակ դրված ստորագրությունները և սպասել առավել բարենպաստ պահի՝ առաջիկայում դրանք վավերացնելու համար: Եվ այս համատեքստում

պետք է դիտարկել ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից 2010 թ. մարտի 4-ին Հայոց ցեղասպանությունը ճանաչող թիվ 252 բանաձևի ընդունումը: Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստում բանաձևի հնարավոր ընդունումը ծառայում էր որպես լծակ այս հարցում Թուրքիայից զիջումներ ստանալու համար: Միաժամանակ ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը ամերիկյան, ինչպես նաև իսրայելական իշխանությունների կողմից (վերջինս զգալի ազդեցություն ունի այս գործընթացի նկատմամբ ԱՄՆ հրեական լոբբիստական կազմակերպությունների շնորհիվ, պատահական չէ, որ մարտի 4-ին թիվ 252 բանաձևն ընդունվեց ընդամենը մեկ ձայնի առավելությամբ և այստեղ էական դերակատարություն ունեցավ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, ծագումով հրեա Հովարդ Բերմանը) կարող է օգտագործվել նաև այլ հարցերում Թուրքիայից զիջումներ կորզելու նպատակով: Իսրայելի համար այս խնդիրը զգալի կարևորություն է ձեռք բերում Թուրքայի ներկայիս դեկավարության՝ աստիճանաբար ուժեղացող հակաիսրայելական հայտարարությունների և 2010 թ. հունվար-մայիս ամիսներին երկու երկրների միջև ծագած մի շարք սկանդալների և վատթարացող հարաբերությունների համատեքստում: Միաժամանակ հարկ է փաստել, որ ԱՄՆ և նաև Իսրայելի իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության, որպես Թուրքիայի դեմ ճնշում գործադրելու գործոնի օգտագործումը, շատ հաճախ առնչություն չունի ՀՀ կամ Սփյուռքի հայության շահերի և մտադրությունների հետ:

## **Turkish – American Relations and the issue of US Recognition of Armenian Genocide in 1991-2007**

### **SUMMARY**

The Turkish American relations have a serious impact on geopolitical developments in the South Caucasus region. They also inextricably intertwined with U.S. – Armenian and Turkish Armenian relations. In all this juncture of mutual interests and mutual mistrust the history plays its unique role in some ways influencing current political developments. In this regard the Armenian Genocide and particularly the process of its recognition by U.S. have important implications for both US Turkish relations and U.S. regional policy.

That is way we have decided to examine in more detailed way that problem as a lot of reports, articles and policy papers have been published on US - Turkish relations, its implications for US regional policy and particular on US Armenian and Turkish Armenian relations and also on Armenian genocide recognition process in US, but very little had been done on evaluating the real impact of Armenian Genocide issue on US Turkish relations. Is it located on the top of bilateral relations or its just plays an important but small role and is used as an additional leverage for getting some concessions from Turkish side in more important issues?

Our research is focused on the period of 1991-2007 covering the developments starting with the collapse of USSR and fell short of detailed examination of recent developments between Turkey and Armenia which began in 2008 and reached its momentum in October 2009 with signing of the much discussed Turkish-Armenian Protocols. We divided our research into two main chapters one focusing on the issue in 1991-2002 and the second covering developments for the period 2002-2007 when Turkey and U.S. faced the sharp deterioration of mutual relations.

We also covered the activities of two main Armenian lobbying organizations in US, the Armenian National Committee of America (ANCA) and the Armenian Assembly of America directed to the recognition of Armenian genocide on the Congressional level. The issue of Armenian Genocide recognition is deeply entrenched not only in U.S.-Turkish relations but also in U.S. domestic policy. In every election circle both Presidential and Congressional candidates are actively involved in efforts to promote Genocide recognition issue hoping to get more Armenian votes. Thus the recognition of Armenian Genocide in U.S. have both foreign and domestic policy implications. Even as a tool for domestic political consuprion its also intertwined with US Turkish relations as every time when the US House or Senate is getting close to the recognition of Genocide Turkey got infuriated urging U.S. Administration to intervene and stop the process otherwise threatening to seriously reduce the level of bilateral cooperation.

During the period between 1991 and 2002 the Armenian Genocide issue came into the centre of bilateral relations only in Autumn of 2000. Before that Turkey was occupied with new prospects ushered for him as a result of USSR collapse. Turkey wants to fill the vacuum of power in Central Asia and partly in South Caucasus dreaming about the restoration of so called new Turkish world. In this efforts Turkey was heavily supported by Washington who perceived Turkey as a good example for newly independent Turkic republics of Central Asia through which it could penetrate its influence and also blocked any possible Iranian involvement in the region. Armenia with its fledgling democracy was faced with full scale Azerbaijani aggression both in Karabakh and in border regions, the implications of devastating earthquake of 1988 and also the blockade first by Azerbaijan and starting from April 1993 also by Turkey. In such circumstances the authorities of Armenia decided not include the issue of Armenian Genocide in the foreign policy agenda of the Republic thereby hoping to avoid further deterioration of relations with Turkey and to “keep

door open” to normalize relations with that country. The Armenian lobby in Washington was also preoccupied by the problems of newly independent Armenia, making efforts to expand the US assistance to the country, created hurdles for Azerbaijan to get American state assistance and also use the Washington as a tool for pressure on Turkey to get him to end the blockade of Armenia. Thus, the issue of Armenian Genocide in US was not among top priorities both for Armenia and for Armenian lobby in Washington.

The situation was changed in 1998, when Armenia faced a period of political turmoil which resulted in resignation of first President Levon Ter-Petrosian and election of Robert Kocharian, former President of Nagorno Karabakh Republic as a President of Armenia. Kocharian included the Armenian Genocide recognition in the foreign policy agenda of Armenia thus hoping to get more leverage on Turkey and also to gain support from Diaspora circles, most of which was critical toward Ter-Petrosian especially after the Armenian Revolutionary Federation ban at the end of 1994. Simultaneously Armenian lobby organizations concentrated more efforts toward promotion of Genocide recognition in US Congress. Thus at the end of the decade there was a coincidence of Armenian and Diaspora policy toward the US recognition of genocide. The chances to reach success were multiplied by the Presidential election campaign in US, in which both main candidates need Armenian voters support during the very tight race. All these factors played their role to reach the momentum in US house at the beginning of October 2000, when House Foreign Affairs committee voted for the Genocide recognition resolution and brought it to the floor of the House.

Only last minute intervention by President Clinton prevented the resolution to be put for the vote in the House. Clinton called to House Speaker Denny Hastert urging him to stop the process as it would have severe implications not only for US Turkish relations but for overall US interest in the Middle East taking into consideration the strained US-Iraq and US-Iran relations and failed efforts to reach peace agreement between

Palestinian and Israeli authorities. For its turn Turkish authorities issued harsh warnings to the US authorities stating that the adoption of resolution would put in danger the strategic relationships between two countries.

The situation once again proved that Armenian genocide recognition issue is not among top priorities in US Turkish relations and only plays supplementary role in the much bigger political game.

Meanwhile the U.S. authorities continue their efforts toward normalization of Turkish Armenian relations and the crisis of Autumn 2000 once more proved the necessity for that policy. This time U.S. administration decided to implement Track two diplomacy as a tool to start process between two sides. These efforts resulted in inception of Turkish Armenian Reconciliation Committee (TARC) in July 2001 with participation of some distinguished figures from both sides included representatives of Russian and U.S. Diaspora members. The activities of committee was strongly criticized some Diaspora and Armenian circles, especially by ARF as a tool to prevent the process of international recognition of Armenian genocide. Anyhow, Armenian authorities were informed about the plans to form such a committee. Although TARC could not reach tangible results and ceased its activities in 2004, it somehow has breached some stereotypes in both societies and played it positive role for the beginning of the official Turkish Armenian normalization process which started in Autumn of 2008.

Meanwhile starting from November 2002 when “Justice and development” party came to power in Turkey Turkish American relations started to deteriorate. There were some factors pushing relations downward among which was the new Turkish policy in Middle East aimed to improve relations with neighbors especially with Iran and Syria. Both countries were perceived in US as countries sponsoring terrorism and Iran was included in the “Axis of Evil” list by US President George W. Bush. Growing ties with these two countries perceived with anxiety in Washington as a sign of alienation of Turkey from Western allies. Another

thorny issue in US-Turkish relations in 2003-2007 was the growing criticism of Turkish authorities toward Israel and expression of sympathy to the Palestinian people. The main problems in bilateral relations was US invasion of Iraq and Turkish rejection to allow American troops to enter Iraq from Turkish territory. This was perceived in Washington as an unacceptable policy which proved that Turkey no more is an trustworthy ally of Washington. Turkey itself criticized US policy in Iraq especially in Northern parts of the country where US supported Kurdistan regional government and creation of semi-independent Kurdish state. This was perceived in Ankara as a fundamental threat to the Turkish vital interests which could result in dismemberment of Turkey and creation of independent Kurdish state in the territory of Eastern Turkey.

In this situation the US recognition of Armenian genocide was a leverage which U.S. could use to punish Turkey. This time Israel lobby also was inclined to promote this issue in US House or Senate, as a result of deteriorated relations between Turkey and Israel.

In this situation Armenian lobby in U.S. doubled its efforts to toward U.S. recognition of Armenian Genocide clearly understanding that this time there were more chances to push “Genocide” resolution through. Armenian authorities also supported these efforts. The Genocide recognition process got its Momentum in Autumn of 2007, when new “Genocide resolution” was adopted in the House Foreign Affairs committee with the support of its long term chairman, active member of Jewish lobby Tom Lantos. U.S. administration made some efforts to prevent the adoption of resolution, even President Bush made a special statement hours before the committee vote on October 10, 2007 urging members to reject the resolution. But overall the adoption of resolution at the committee level was a tool both for US and Israeli authorities to show their disappointment toward Turkish policy.

Turkish authorities warned Washington as an adoption of resolution by full house would have huge negative impact on US Turkish relations. They also decided to play Kurdish card to prevent the adoption of resolution. On

October 17, 2007 Turkish parliament allowed Turkish troops to invade Northern Iraq and fight against PKK members. Long term Turkish invasion would jeopardize vital American interest in Iraq as Kurds were only American allies and Northern Iraq was a relatively calm region of Iraq where American forces were involved in mix of civil war and insurgency operations.

Thus both American authorities and also the Israel Lobby were not further interested in promotion of Genocide resolution. Turkey was warned by adoption of resolution in Foreign Affairs Committee and there was no need to press Turkey more. Instead both Turkish and American authorities were inclined to find a mutual compromise. The adoption of genocide resolution was stopped in US House and Turkish authorities organized only short term military operation in Northern Iraq in February 2008, details of which were agreed with Americans.

So, once again the issue of Armenian Genocide recognition was “sacrificed” for more important US and Turkish interests proving that Armenian genocide was not among top issues in US Turkish relations and was used by American authorities as a tool to press Turkey and get some concessions without any real intention to recognize the fact of Armenian Genocide.

The same situation we face during the Obama Administration. New American administration worked hard toward Turkish Armenian normalization putting huge efforts to get the bilateral protocols signed on October 10, 2009. It urged both sides to ratify protocols without any preconditions and in reasonable timeframe. Facing Turkish denial to fulfill its obligations US again put forward the issue of Armenian Genocide. In March 2010 once again House Foreign Affairs committee adopted Genocide resolution with very narrow vote. Meanwhile Turkey was valued in US as an important ally especially in case of American withdrawal from Iraq, growing military presence in Afghanistan and unclear future of Iran nuclear program.

Thus once again the genocide issue was used as a bargaining chip in US-Turkish relations and as a tool to press Turkey, but again it was not among top priorities in bilateral relations.

## Օգտագործված գրականության և սկզբնաղբյուրների ցանկ

Արխիվային նյութեր և փաստաթղթերի ժողովածուներ

ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, գիտական ֆոնդեր, բաժին 25, քրապանակ 17

ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, գիտական ֆոնդեր, բաժին 41, քրապանակ 15

“Геноцид Армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества” Документы и комментарии. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментариев доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов, том 2, часть 1, 2003, Москва, “Гардарик”,

The Armenian Genocide. Documents and Declarations 1915-1995. Compiled with an introduction by Harut Sassounian, Los Angeles, 1995

Գրականություն

Անանյան Ա., Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ, (թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին), Երևան 2003

Անանյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում, (1991-2004 թթ.), Երևան 2006

Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., Երևան, 2009

Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Երևան, 2001

Գալլաքյան Կ., Հայ ափյուրքի պատմություն, Երևան, 1998

Միրզոյան Ա., Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման և դատապարտման գործընթացը Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1915-2004 թթ., ատենախոսություն Է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների բեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան 2005

Akyuz Abdullah, “U.S.-Turkish Economic Relations at the Outset of the 21st Century,” Insight Turkey, Vol. 2, No. 4, October–December, 2000

Baran Zeyno, “Turkey Devided”, Journal of Democracy, Vol 19, No 1, January 2008

Blank Stephen, Pelletiere Stephen, Johnsen William, Turkey’s Strategic Position at the Crossroads of World Affairs, Strategic Studies Institute, US Army War College, December, 1993

Cagaptay Soner, Turkey at the Crossroads: Preserving Ankara’s Western Orientation Washington DC:Washington Institute For Near East Policy Studies, 2005

Cornell Svante and Kaya Kemal, “Turkey’s Elections; Democratic Islamists?”, SAISPHERE, 2007

Gordon Phillip and Taspinar Omer, “Turkey on the Brink”, Washington Quarterly, Vol 29, No 3, Summer 2006

Hale William M, Turkish Foreign Policy 1774-2000, Routledge, 2002

Heather S. Gregg, Divided They Conquer: The Success of Armenian Ethnic Lobbies in the US, The Rosemary Rogers Working papers Series, 2001

Hill Fiona, Taspinar Omer, “Turkey and Russia: Axes of the Excluded?”, Survival, Vol 48, No 1, Spring 2006,

Hill Fiona, Taspinar Omer, “Russia and Turkey in the Caucasus: Moving Together to Preserve the Status Quo?”, IFRI, Research Programme Russia/NIS, Russie.Nei.Visions N 8, January 2006

Larabee Stephan, Lesser Ian O., Turkish Foreign Policy in an Age of Uncertainty, RAND Corporation 2003

Larabee Stephan, “Turkey Rediscovered the Middle East, Foreign Affairs, July-August 2007

Laurelle Marlène, Russo-Turkish Rapprochement through the Idea of Eurasia: Alexander Dugin’s Networks in Turkey, The Jamestown Foundation, April 2008

Lesser Ian O., Turkey, the United States and the Delusion of Geopolitics” Survival, Vol 48, No 3, Autumn 2006

McGregor Andrew, Massoud Barzani Conducting Dangerous Games in Northern Iraq, Terrorism Focus, Vol IV, Issue 23, July 17, 2007

McGregor Andrew, PKK Arms Scandal Fuels Turkish Suspicions, Terrorism Focus, Vol IV, Issue 27, August 14, 2007

Menon Rajan and Wimbush Enders S., “The US and Turkey: End of an Alliance?”, Survival, Vol. 49, No 2, Summer 2007

Mirak Robert, Torn Between Two Lands: Armenians in America, 1890 to World War One, Cambridge, Harvard University Press, 1983  
 Mooradian Moorad, Reconciliation: A Case Study of the Turkish-Armenian Reconciliation Commission, Institute for Conflict Analyses and Resolution, George Mason University, Working Paper N 24, March 2004  
 Phillips Jenny, Symbol, Myth and Rhetoric: The Politics of Culture in an Armenian American Population, New York, AMS Press, 1989  
 Phillips L. David, Unsilencing the Past: Track two Diplomacy and Turkish-Armenian Reconciliation, Berghahn Books, 2005,  
 Purvis Andrew, “Istanbul’s Economic Tension. A Lawsuit Threatens to Undo the Pro-Islamic Government’s Record of Reform and Growth” Time Europe, Vol. 171, No 20, May 19, 2008  
 Roger Trask R., The United States Response to Turkish Nationalism and Reform, 1914-1939, Minneapolis, University of Minnesota Press, 1971  
 Socor Vladimir, Turkey Offers Rout to Europe For Iranian and Turkmen Gaz, Eurasia Daily Monitor, July 19, 2007

Ինտերնետային կայքեր

<http://www.aaainc.org>  
[www.anca.org](http://www.anca.org)  
<http://www.atour.com>  
<http://www.azatutyun.am>  
<http://www.azg.am>  
<http://blogcritics.org>  
<http://www.cnn.com>  
<http://www.esiweb.org>  
<http://www.foreignaffairs.org>  
<http://www.foreignpolicy.org.tr>  
[www.house.gov](http://www.house.gov)  
[www.ng.ru](http://www.ng.ru)  
<http://www.nytimes.com>  
<http://pewglobal.org>  
<http://thomas.loc.gov>  
<http://www.timesonline.co.uk>  
<http://www.turkey-now.org>  
<http://www1.american.edu>

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Նախաբան .....3

Գլուխ Առաջին

Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ կողմից  
 Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2002 թթ. ....8

1.1 Թուրք-ամերիկյան հարաբերությունները 1991-2002 թթ. ....8

1.2 Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը ԱՄՆ-ում  
 և ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների  
 գործունեությունը 1991-2002 թթ. ....13

1.3 Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի  
 գործունեությունը .....27

1.4 ՀՀ պաշտոնական դիրքորոշումը Հայոց ցեղասպանության  
 միջազգային ճանաչման խնդրում.....35

Գլուխ Երկրորդ

Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ կողմից  
 Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 2003-2007 թթ. ....39

2.1 Թուրք-ամերիկյան հարաբերությունները 2003-2007 թթ. ....39

2.2 Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը ԱՄՆ-ում  
 և ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների  
 գործունեությունը 2003-2007 թթ. ....52

Վերջաբան .....64

SUMMARY .....68

Օգտագործված գրականության և սկզբնաղբյուրների ցանկ ..... 74

Բովանդակություն .....77

ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈԳՈՍՅԱՆ

*Թուրք-ամերիկյան հարաբերությունները  
և ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության  
ճանաչման խնդիրը 1991-2007 թթ.*

БЕНИАМИН ПОГОСЯН

Турецко-американские отношения и  
вопрос признания Геноцида армян  
Соединёнными Штатами Америки в  
1991-2007 годах

BENIAMIN POGHOSYAN

Turkish – American Relations and the issue of US  
Recognition of Armenian Genocide in 1991-2007

Տեխնիկական խմբագիր՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՐՈՒՅԱՆ  
Տպագրիչ՝ ԼԵՎՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ